

ՄԱՐԶԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆ

թ. 8ԱՐԻ, 2006, թիվ 1-2 (283 - 284) VOL. XXV №1-2

مارزيك
مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنمن بيروت

marzig
SPORTS MAGAZINE



Հ.Ս.Հ.Ս.
ՊՈՒԼԿԱՐԻՒ

ՀԱՅԱՀ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ 8ՐԴ ԲՈՒՎԿՈՒՄԸ ԱՅՍ ԱՄԱՆ՝ ԲԻՒՐԱԿԱՆԻ ՄԵԶ

Uարզիկ»ի այս թիւը երբ ընթերցողներուն հաստի, համա-Հ.Մ.Լ.Մ.ական 8րդ բանակումին բացման ազդանշանը մօտեցած կ'ըլլայ: Բանակումը տեղի պիտի ունենայ 31 Յուլիս-9 Օգոստոս 2006ին, Բիւրականի մէջ, Հայաստան, մասնակցութեամբ՝ միութեան 16 շրջաններէն 725 սկառուտներու: Հիւրաբար պիտի մասնակցին նաեւ իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութենէն եւ Հայ Մշակութային «Միփան» Միութենէն սկառուտական պատմիրակութիւններ:

Բանակումին նշանաբան ճշդուած է «Միշտ պատրաստ՝ հայրենիքի համար» կարգախօսը: Ցայտագիրները պիտի ընդգրկեն Հայաստանի պատմական եւ տեսարժան վայրեր այցելութիւններ (Գառնի, Գեղարդ, Խոր Վիրապ, Էջմիածին, Օշական, Շիծեռնակաբերդ, Եռաբլուր, Սարդարապատ, Սեւանայ լիճ եւ այլն), նաեւ հանրային ծառայութեան ձեռնարկներ՝ Գիւմրիի եւ Վանաձորի մէջ:

Հ.Մ.Լ.Մ.ի կանոնագրով, համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումներուն նպատակն է՝

«1) Ի մի հաւաքել Հ.Մ.Լ.Մ.ի գանագան շրջաններու արիները, արենոյշները, երեցներն ու պարմանուհիները:

«2) Տալ ազգային ու միութենական դաստիարակութիւն եւ առիթ ստեղծել փոխադարձ ծանօթացման:

«3) Սատարել Հ.Մ.Լ.Մ.ի սկառուտութեան միջազգային ծանօթացման»:

Բանակումին մասնակից շրջաններուն պատկերը կը ներկայացնէ հետեւեալը՝ Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ. (Հայաստան), Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանս, Լոնտոն, Յունաստան, Արեւմտեան Մ. Նահանգներ, Արեւելեան Մ. Նահանգներ, Գանատա, Հարաւային Ամերիկա, Աւստրալիա, Լիբանան, Սուրիա, Ամման, Երուսաղէմ, Քուէյթ, Պաղտատ եւ Վիեննա: Վերջին երկու շրջանները առաջին անգամ ըլլալով իրենց մասնակցութիւնը կը բերեն համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումի մը:

Բանակումին ընդհանուր խմբապետն է Լոնտոնէն եղբ. Ալէք Խաչատրեան: Փոխ խմբապետ եւ փոխ խմբապետուհի ճշդուած են Հայաստանէն եղբ. Հրաչ Շմաւոնեան եւ Լիբանէն քոյր Լուսին Գաղէցեան: Բանակումին գործադիր մարմինին մաս կը կազմեն եւ հերթապահութեան զանազան պաշտօններ ստանձնած են քոյրեր իրմա ձէրէճեան (Լիբա-

նան), Ուուզան Թամրազեան (Հայաստան), եղբայրներ Օշին Փիրումեան, Գօօօ Մկրեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Մանուկ Քէօչէկէրեան (Սուրիա), Տիրան Շահինեան (Գանատա) եւ Յարութ Նասոյեան (Հայաստան):

1974էն՝ Հ.Մ.Լ.Մ.ի համագաղութային կառոյցին ստեղծումէն ի վեր տեղի ունեցած են Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 7 բանակումներ՝ հետեւեալ կարգով:-

● Համա-Հ.Մ.Լ.Մ.ական Ա. Բանակում- 1-13 Օգոստոս 1978, Քալամոս (Յունաստան), մասնակցութեամբ՝ միութեան 12 շրջանէ 226 արի-արենոյշներու: Ընդհանուր խմբապետ եղբ. Սուլբէն Մուլրատեան:

● Համա-Հ.Մ.Լ.Մ.ական Բ. Բանակում- 14-26 Օգոստոս 1980, Քալամր (Ֆրանսա), մասնակցութեամբ՝ 12 շրջանէ 291 արի-արենոյշներու: Ընդհանուր խմբապետ եղբ. Սուլբէն Մուլրատեան:

● Համա-Հ.Մ.Լ.Մ.ական Գ. Բանակում- 10-20 Օգոստոս 1986, Չալֆոնթ Հայթ (Անգլիա), մասնակցութեամբ՝ 11 շրջանէ 269 արի-արենոյշներու: Ընդհանուր խմբապետ եղբ. Արթուշ Աղամալևան:

● Համա-Հ.Մ.Լ.Մ.ական Դ. Բանակում- 21-31 Օգոստոս 1990, Այս Սարինա (Յունաստան), մասնակցութեամբ՝ 14 շրջանէ 484 արի-արենոյշներու: Ընդհանուր խմբապետ եղբ. Ժիրայր Սարգսիսեան:

● Համա-Հ.Մ.Լ.Մ.ական Ե. Բանակում- 27 Յուլիս-7 Օգոստոս 1994, Բիւրական (Հայաստան), մասնակցութեամբ՝ 14 շրջանէ 434 արի-արենոյշներու: Ընդհանուր խմբապետ եղբ. Կարպիս Գապասագալեան:

● Համա-Հ.Մ.Լ.Մ.ական Զ. Բանակում- 12-21 Յուլիս 1998, Աղամանածոր (Հայաստան), մասնակցութեամբ՝ 19 շրջանէ 715 արի-արենոյշներու (24ը հիւրաբար՝ իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութենէն եւ Հայ Մշակութային «Միփան» միութենէն): Ընդհանուր խմբապետ եղբ. Վանուկ Քէօչէկէրեան:

● Համա-Հ.Մ.Լ.Մ.ական Է. Բանակում- 27 Յուլիս- 4 Օգոստոս 2002, Բիւրական (Հայաստան), մասնակցութեամբ՝ 17 շրջանէ 510 արի-արենոյշներու (31ը հիւրաբար՝ իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութենէն եւ Հայ Մշակութային «Միփան» միութենէն): Ընդհանուր խմբապետ եղբ. Րաֆֆի Կէօվողանեան:





ՄԱՐԶԻԿ Սպորտական հեղինակություն

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
مارزيك مجلّة رياضيّة شهريّة تصدرها جمعيّة المومنيّن الرياضيّ



3

Հ.Մ.Հ.Մ.ԱԿԱՆ ԿԵՎԱՆՔ

■ Խմբագրական	2
■ Ակնարկ	3
■ Յուշեր	4
■ Դաստիարակչական	9
■ Պատմութեան Համար	10
■ Փաստաթուղթ	15
■ Անդրադարձ	17
■ Մասնաճիւղէ Մասնաճիւղ	20
■ Մեր Կորուստները	35




20



32

ԲԱԺԻՆՆԵՐ

■ Մարզական Գիտութիւն	18
■ Մանկապատանեկան	38
■ Տարբեր Հայեցքով	40



Մարզական ամսաթերթ
Հրատարակութիւն՝ Հ.Մ.Հ.Մ.ի
Կեդրուսական Վարչութեան
ԻԵ. ՏԱՐԻ, 2006, ԹԻՒ 1-2 (283-284)

ԽՄԲԱԳԻՐ
Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
Սեղա Պէշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՉԱԱՆՈՒՄԲ
Արօ Մոսկվեան
Գօգօ Մլրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՍԻՆ
Պետրոս Շեննեսեան, Տոքր. Միասք
Արզումանեան, Միհրան Շիմշիրեան,
Կարապետ Կէմմեան, Ա. Ա.

Սայրի Լատոյեան եւ
Հրաններու թղթակիցներ:

Էջաղրում - Զարեհ Զէօրէքճեան
Գրաշառութիւն - Վերա Բարսեղեան
Colour Separation - Photogravure Paklayan
Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն

Yconcept
INTERNATIONAL

ՀԱՅԱՍՏԱՆ
Հայաստան
ՏՊԱՐԱԾՈՒՅԹ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵ
Պուրճ Համուտ, Ճիխշեանի Թաղ
«Սեւան» Շէնք, Գ. Յարկ
Հեռ: 01/248043, Fax: 01/260117
E-mail: marzig@homenetmencentral.com
P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թէրթին
հատավածադի սակն է 3000 լ.ո.:
Տարեկան բաժանորդագրութեան
սակ ճշդուած է 35000 լ.ո.:
Լիբանանէն դուրս թէրթին
բաժանորդագրութիւնը
կը կատարեն Հ.Մ.Հ.Մ.ի Մեկուսի
եւ Շրանային Վարչութիւնները:
Թէրթը ուղղակի Լիբանանէն
կը ստացնի անձնական
բաժանորդագրութեամբ
(Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
եւ Եւրոպական երկիրներ \$50,
Ամերիկա եւ Աստրալիա՝ \$55):



ԵՐԱՎԱՆԻ ՄԻԱՅԹԻՒՆ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆ 8ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԸՆԴԱՑԱԶ)

Ըստով, Բիբրականի մէջ տեղի կ'ունենայ համա-Հ.Ս.-Լ.Ս.ական ծրդ բանակումը, մասնակցութեամբ՝ 725 բակառութեանք:

Երեւոյթը խօսուն է եւ փաստը կուտայ այն իրողութեան, որ հակառակ իր շուրջի գրաւիչ ու այլասերիչ պայմաներուն, ինչպէս երեկ, այսօր եւս <Ս.Ը.Մ.Մ.ր կը մնայ սիրելի, հարազատ եւ ոգեշնչող միութիւն մը բոլոր անոնց համար, որոնք աշխարհի չորս ծագերուն կ'ապրին հայեցի արժէքներու նախանձախինդրութեամբ եւ հայ ոգիի պաշտամունքով: <Ս.Ը.Մ.Մ. կը շարունակէ գրաւել հայ մարդոց սրտերուն ջերմ անկիւնը: Իր վրայ կը գուրգուրան ալեւոր ծերունիկն մինչեւ նորահաս մանուկը, որովհետեւ անոնցմէ իրաքանչիւր <Ս.Ը.Մ.Մ.ի դրօշին հպարտանքով կը շտկէ իր մէջքը եւ անոր գաղափարին լոյսով կը պայծառացնէ աչքերը:

Իսկ ո՞ւր փնտռել զաղտնիքը այս
երեւոյթին:

Արդեօք որովհետեւ Հ.Ս.Ը.Ս.ը մեզի
տուած է սկառտութիւն, կարգապահու-
թիւն, մարդիկներ եւ մարդական ոգի:

Ծատ հաւանաբար, այլ: Սակայն, այս բոլորէն վեր ան տուած է նաև հաւաքական ապրում մը, զոր կարելի չէ թիւերու եւ վիճակագրութիւններու լեզուով հաշեւել: Գաղտնիքը հոն է, որ ան իրական Ըսդհանուր Միութիւն է: <Մ.Հ.Մ.Ի մէջ հոգեհարապատ քոյր-եղբայր կը դառնան մեր ժողովուրդի բոլոր զաւակները, անխտի՛ր: Ուսանողին հետ վարչական կ'ըլլայ գործաւորը: Առաքելականին խմբակից կը դառնայ կարողիկէն, աւետարանականը: Մարտացիին հետ կը գործէ այնթապցին, սատունցին: Կողք-կողքի բանակում կ'ընեն լիբանանահայոն ու

արժանիքինահայը, պուլկարահայն ու
աւստրալահայը: Այսպէս, բոլորը ձեռք-
ձեռքի տուած կը հետապնդեն բարձրա-
նալու եւ բարձրացնելու նոյն սրբազն
ուխտը: Անոնք իրենց մկաններուն եւ ջի-
ղերուն հետ կը պրկեն իրենց հոգիները,
յոյսի, հաւատքի եւ խանդավառութեան
ալիքներ կը տարածեն իրենց շուրջը, եւ
ինքնավատահութեան ու հպարտու-
թեան մշտանորոգ աւիշով կը զօրացնեն
աշխարհասիփիոն մեր բազմութիւնները:

**Մարդիկ անգամ մը եւս կը մտածեն ու
կ'անդրադառնան, թէ որքա՞ն մեծ է այն
գործը, զոր Ըստիանուր Միութեան «կա-
մաւոր բանակ»ը կը տանի աշխարհի
չորս ծագերուն: Ու զործին հետ մէկտեղ,
որքա՞ն մեծ են անոր դէմ ցցուած դժուա-
րութիւնները: Նորահաս սերունդը ապ-
գային ոգիով, առողջ գիտակցութեամբ
եւ առողջ մարմնով կրթելու համար տա-
կալին հսկայ աշխատանք կայ կատարե-
լիք: Երիտասարդութիւնը, որ ամէն բա-
նէ առաջ հաւատք ու խանդավառութիւն
է, կանգ առնել չի գիտեր յաղթանակի իր
դափնիններուն վրայ:**

Միշտ հարկաւոր են նոր դափնիներ եւ համա-Հ. Մ. Ը. Սկզբան ձեռնարկները, բանակումներ թէ մարդակաղեր, լաւագոյն առիքները կ'ընծայեն, որպէսզի նոր կեանք, եռանդ, ժպիտ եւ յոյս կայծկրլտի մեր դաշտերուն եւ բանակավայրերուն մէջ, եւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միուրեան դրօշին տակ, մեր տղաքն ու աղջիկները մեծնան, շնչելով մքնողուրտը ապօային եւ գաղափարական պայծա՛ռ իտէալներու:

ԱՐԺԱՆԱՒՐԻՆ ԱՐԺԱՆԻ ԳՆԱՀԱՏԱՆՔ

**Պետրոս Շենմեսեան
ՊԵՅՉՐՈՒԹ**

Վերջերս, Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի հեծելարշաւրի յանձնախումբը, հովանաւորութեամբ Շրջանային Վարչութեան, գեղեցիկ գաղափարը ունեցած ձեռնարկով մը գնահատելու, եւ հոգ չէ թէ տարիներ վերջ վերարժեւորելու, Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի հեծելարշաւրի անցեալի փառքը կերտած վեթերան հեծելանորդները. եղբայրներ Ազատ Գալայճեան, Յովհաննէս Մատուրեան, Սարգիս Հաճինազարեան, Ժիրայր Խաչատուրեան, Վարդգէս Մատուրեան, Օննիկ Պալրքճեան, Ժան Նալչայեան, Ժողէֆ Յովհաննէսեան, Գօդօ Աբրահամեան, Ներսէս Հատիտեան, Յովհաննէս Վարժապետեան եւ քոյր Վերադրատոքեան:

Իսկապէս յուզիչ եւ տպաւորիչ էր պատուոյ Հարթակին վրայ տեսնել անցեալի փաստակաւոր եղբայրներ: Ոմանք իրենց կեանքին վերջալայսին մօտեցած, ծերունազարդ ու դողդոջ ձեռքերով կը ստանձնեն իրենց յուշանուէրները, իբրեւ Հ.Մ.Լ.Մ.ի անցեալի փառքը կերտած կենդանի պատփամախօսներ:

Հ.Մ.Լ.Մ.ական վերոյիշեալ մարզիկները իրենց երիտասարդութեան համակ ջիղ ու եռանդ էին, գոտեալնդուած Հ.Մ.Լ.Մ.ական վճռակամութեամբ: Լիբանանի սահմանները կը նուաճէին իբրեւ արագավազ եղնիկներ, եւ բարձրաբերձ լիոները կը մազյցէին իբրեւ բարձրասլաց արծիւներ: Անոնց հետ կը թեւածէր Հ.Մ.Լ.Մ.ի փառքն ու դրօշը:

Գնահատանքի նման ձեռնարկներ միշտ եղած են ու կ'ըլլան Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքէն ներս: Այսպիսի ձեռնարկներ մէկական դաստիարակչական պատգամներ կը փոխանցեն: Պատգամ, թէ Հ.Մ.Լ.Մ.ը չի մոռնար իր անցեալի փառքը կերտած վաստակաշատ միութենականներն ու մարզիկները: Պատգամ Հ.Մ.Լ.Մ.ի նոր սերունդին, թէ տեսէ՞ք Հ.Մ.Լ.Մ.ը որքա՛ն հարուստ է անցեալի իր հերոսներուն աւանդով եւ

փառքով, եւ թէ՝ նոր սերունդը իր կարգին պարտի բան մը աւելցնել անցեալի այդ փառքին ու աւանդին վրայ: Ինքն իր լուման պարտի նետել Հ.Մ.Լ.Մ.ի պատմութեան գանձանակին մէջ:

Պատգամ, հոգեկան գոհացումով ըստ արժանային գնահատուելու: Արդարեւ, Հ.Մ.Լ.Մ.ականները, անոնք ըլլան վարչական պատասխանատուներ թէ մարզիկներ, Հ.Մ.Լ.Մ. մուտք կը գործեն տալու, անսակարկ նուիրելու վճռակամութեամբ, փոխարէնը անոնք կը ստանան ոչ թէ նիւթական կամ փառքի վարձատրութիւն, այլ՝ բարոյական վարձատրութիւն եւ ամէնէն կարեւորը՝ հոգեկան ինքնագոհութիւն:

Նմանօրինակ մեծարաննքներով Հ.Մ.Լ.Մ.ը կարծէք թանկարժէք ու փոշեթաթախ առարկաներ է որ կը սրբէ, կը փայլցնէ եւ իրենց արժանի բարձրութեան պատուանդանին վրայ կը դնէ, իբրեւ անցեալին եկող ու ապագային գացող մշտագոռ պատգամներ:

Այս, շատ են մեր մէջ նման թանկարժէք իրերը՝ փաստակաշատ Հ.Մ.Լ.Մ.ականները, սակայն երբ զանոնք չենք մեծարեր, չենք ներկայացներ նոր սերունդին, անոնք պիտի մնան շուրջի մէջ, մոռացութեան ենթակայ:

Անոնք դեռ քանի մը տարի եւս պիտի ապրին մեր իրականութեան մէջ, իբրեւ մեծ անձանօթներ, սոսկական տարիքաւորներ, ու Հ.Մ.Լ.Մ.ի բազմամարդ ձեռնարկներուն պիտի մնան մէկը հազարաւոր ներկաներէն, անձանօթ ու անդիմագիծ:

Մեծարանքի հանդիսութիւնները կ'օգնեն նոր սերունդին ճանչալու, թէ իր կողքին կանգնած այդ ծերունին ուրիշ մէկը չէ, այլ՝ իրեն պէս երիտասարդ կամ պատանի տարիքէն Հ.Մ.Լ.Մ.ի շարքերը մտած մէկը, որ իր բաժինը տուած է միութեան:

Պէտք է շարունակել եւ ընդհանրացնել արժանաւորին արժանի գնահատանք տալու Հ.Մ.Լ.Մ.ական գեղեցիկ աւանդութիւնը: Սակայն, միշտ զգո՞յշ: Պէտք է ընտրել արժանաւորը ընթացիկ միութենականէն, որ միութեան շարքերէն անցած է ասուպի մը նման, առանց հետք ձգելու միութեան մէջ:



Գնահատագիրներու արժանացած եղբայրներ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներուն եւ հեծելարշաւրի Լիբանանի ֆետերասիոնի նախագահ եղբ. Վաչէ Մատուրեանի հետ:

ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԵԱՆ ՅՈՒՆԵՐ

(Ա մաս)

Տոքք. Միսաք Արզումանեան
ՍԱՆ ԽՈՍՀ

Ե՞ՐՔ, Ո՞ՒՐ ԵՒ ԲՆՇՊԵՍ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԱՅ

Միութենական կեանքիս շուրջ կէս դարու ժամանակաշրջանին, վերոգրեալ հարցումները մէկ անգամ տրուեցան ինձի:

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէ մը ետք, մեզ Լիբանան վերադարձնող օդանաւին մէջ, կողքիս տեղ գրաւած, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի վաստակաւոր եղբայրներէն՝ տեղական, Շղանային եւ Կերպոնական Վարչութիւններու մաս կազմած՝ հանգուցեալ եղբ. Վարուժան Մուրատեանն էր:

Զեմ գիտեր ինչո՞ւ այդ օրը, այդ ժամուն, օդաթռիչ այդ բարձրութեան վրայ, աննախադէպ ու անակնկալ այդ հարցումները: Կը յիշեմ, սակայն, որ հաճոյքով դիտեցի պատասխանս սպասող եղբօր հարցական արտայայտութիւնը, եւ մեծ գոհունակութեամբ ալ պատասխանեցի, եռեակ բնոյթով ներկայացուած հետաքրքութեան:

Այսօր, այս յուշագրութեամբ կ'անդրադառնամ այդ պատահարին, մտածելով որ Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին գանազան մակարդակներուն վրայ ծառայութեանս ծանօթ կամ ինծի գործակից եղած բազմահարիւր եղբայրներէն ոմանք, թերեւս շատերը, եղբ. Վարուժանին օրինակով կրնան նոյն հարցականները ապրած ըլլալ, առանց սակայն զիս հարցապնդէու պատեհ առիթը ունենալու:

Իսկոյն յայտնեմ, որ ստորեւ գրուած տողերը ինքնապանձման ոչ մէկ միտում ունին: Գրի առած եմ զանոնք բանալու համար էջ մը կեանքէս, ուր արձանագրուած է, թէ ի՞նչպէս ոչ-ուղղափառ ճամբով մը տրուած է ինծի միութենական պատկանելիութիւնս, որ երկար տարիներ իմաստաւորեց կեանքս, եւ որուն հպարտութիւնը կը վայելեմ մինչ օրս:

Գաղտնիք չէ, որ հայորդի մը Հ.Մ.Ը.Մ.ական կը դառնայ

Այս թիւն սկսեալ կը ներկայացնեամ Հ.Մ.Ը.Մ.ի Կերպանական Վարչութեան նախկին ապենապեկ (1987-1999), բազմավայրակ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. լոռք. Միսաք Արզումանեանի յուշերուն երկրորդ բաժինը, որ նույրուած է միութենական իր կեանքի առաջին բայլերուն, Հ.Մ.Ը.Մ.ի անդամակցութեանէն մինչեւ Մերժաւոր Արևելքի Ծրանային Վարչութեան անդամակցութիւն:

Յուշերուն առաջին բաժինը՝ «Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանական ֆուրանի խումբին մասնակցութիւնը Ասիոյ 1970ի ախոյեան խումբերու ախոյեանութեան», չորս բաժինով կրագարակած էին «Մարզիկ»ի անցեալ փարուան թիւնով (274, 275, 277, 278):



1958-1962, յորդանանեան բանակէն բժիշկներու խումբ մը: Նստած, ձախէն առաջինը՝ եղբ. տոքք. Միսաք Արզումանեան, երրորդը՝ բանակի Կերպանական հիանդանոցի բժշկապետ, հետագային առողջապահութեան նախարար, ապա վարչապետ՝ Ապալէ Սալամ Մաժալի:

իր ծնողներուն հաւանութեամբ, օգնութեամբ կամ քաջալերանքով:

Միութեան մարզական կամ սկաուտական բնագաւառներէն մէկուն մէջ ընդունուելու գրաւոր դիմում կատարելով եւ վարչութեան «օրհնութեամբ» միանալով անոր: Իմ պարագային հարցը տարբեր հունով ընթացաւ:

Եեղասպանութենէն որբացած, մահազարհուր ճամբաներէ անցած, Անթիլիասի որբանոցին մէջ պատսպարուած, ու հոն ալ «Ազատ, Անկախ, Միացեալ» Հայաստանի գաղափարով սնած հօրս շունչին տակ, եռագոյնադաւան մժնոլորտի մը մէջ, Հ.Մ.Ը.Մ.ը ըստ էութեան մեր տան մէջ էր, ու ես ինք-գինքս կը զգայի Հ.Մ.Ը.Մ.ական:

Այսուհանդերձ, կ'երեւի գրուած էր, որ չարքերէն դուրս՝ դիտողի կարգավիճակս կարծ պիտի տեսէլ, ու ես անակնկալ իրադարձութեամբ մը պիտի արժանանայի Հ.Մ.Ը.Մ.ի վաւե-

րական մկրտութեան: Եւ այդ, այն օրերուն, երբ Լիքանանի ազգային կեանքին մէջ, Հ.Մ.Լ.Մ.ով ստեղծըւած էր վերափոխիչ ապրումներու չափազանց ոգեշառ ու առինքնող մթնութորտ:

Աւելցնեմ, որ ներգաղթի ալեկոծ ու խոռվայրոյ օրերն էին, երբ հայու հայրենասիրութիւնը, գաղափարական պատկանելիութիւնը հաւատաքնութեան կ'ենթարկըւէին, անհաւատ վարդապետութեան մը նորատեսակ «քուրմերուն» եւ նորելուկ տեսաբանութեան մը, նորիմաստ Հայաստանասիրութեան մը ծառայող աղանդաւորներու կողմէ:

Տակաւին, այն ժամանակներն էին, երբ երջանկայիշատակ Զարեհ Վեհափառին վկայագրութեամբ՝ «Հայ Երիտասարդներ այնքան սիրած են Հ.Մ.Լ.Մ.ը, որ անոր նշանակը անշընշելի կերպով գծել տուած են իրենց մորթին վրայ»: Այն օրերուն, Հ.Մ.Լ.Մ.ը իրաւ հայրենասիրութիւն ուխտագրող երդումով, իր անկրկնելի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով, եռախորհուրդ դրօշով, կը յաջողէր աննախլնթաց գործունէութիւն ծաւալել, ու մանաւանդ սրտաշարժ տողանցքներով, անցելայուշ տօնակատարութիւններով (Ապրիլեան թէ Մայիսեան) շացուցիչ փայլ տալ իր հմայքին, եւ իրեն քաշել ինծի պէս բազմահարիւր հայորդիներ:

ՕՏԱՐԱՆՈՒՆ, ԲԱՅՑ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՅԱԴՐՈՇՄ ՄԿՐՏԱՐԱՎՆ

Յուշագրութեանս վերնագրին «Ե՞րբ»ը եւ «ո՞ւր»ը բացայացելէ ետք, կը մնայ ներկայացնել մկրտավայրու:

Հօրս գործին պարտադրած՝ քաղաքէ-քաղաք տեղափոխութիւններուն բերումով, մանկութիւնս անցաւ Պէքայի դաշտի Ռայաք, Պաալպէք, Ապլահ բնակավայրերուն մէջ: Աշակերտեցի այդ շրջանին հոն գործող ազգային դպրոց անունով երկու փարժատուներուն: Աւարտելով զանոնք, ծնողքին որոշումով, 11 տարեկանին փոխադրուեցայ Պուրճ Համուտ, ուր օթեւան ունեցայ ազգականներու մօտ, եւ կարողացայ յաճախել Պէյրութի վաւերական կրթօճախներէն՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ՝ Յիսուսեան միաբանութեան ճեմարանը:

Շատ չանցած, համաշխարհային Բ. պատերազմի օրերուն, հակադիր ճակատներու վրայ գտնուող ֆրանսական եւ անդլիական բանակներուն Պէքա հասնիլը պատճառ կ'ըլլայ, որ ծնողքս ալ ընտանիքով կը փոխադրուի Պուրճ Համուտ ու



Պուրճ Համուտի վաստակաւոր եղբայրներու խմբանկար մը Ծորճ Մարտիկեանի եւ Լիքանանի սկաուտական ֆետերասիոնի օրուան ներկայացուցիչն հետ:

Ոտքի, աչէն երրորդը՝ տոքթ. Միսաք Արգումանեան: Զախին՝ եղբ. Զաքար Չորպաճեան:

Ալիոններ, ալիծածան եռագոյններով առաջնորդուող պանծալի շքերթներ, ջահագնացութիւններ: Այստեղ է ահա, որ քանի մը տարի անց, կանոնագրային հասկացողութեամբ քիչ մը զարտուղի, բայց ապահով արահետով մը միացայ Պուրճ Համուտի Հ.Մ.Լ.Մ.ին:

Կիրակի օր մըն էր, Պուրճ Համուտի մեր տան մէջ, յաջորդ օրուան դասերս կը պատրաստէի, երբ թակուեցաւ գուուր, ու բանալով զայն, դէմս գտայ իր ծառայասիրութեամբ եւ համեստութեամբ Պուրճ Համուտի մէջ հանրածանօթ դէմք դարձած եղբ. Յակոբ Մինասեանը:

Փոխադրած բարեւէ մը ետք, երբ հետաքրքիր էի գիտնալու իր այցելութեան դրդապատճառը, զինք ներս հրաւիրելու քաղաքավարական պարտականութիւնս չկատարած տակաւին, կանխեց ամէն բան, յայտնելով որ պիտի չնստի, կ'աճապարէ, պէտք է շուտով եկեղեցի հասնի: Եւ տեղեկացուց, որ եղբ. Արշակունի Ռաֆայէլեանը բարեւ ունի, եւ կ'ուզէ քեզ Հ.Մ.Լ.Մ.ի շարքերուն մէջ տեսնել: Ատոր համար ալ դիմումագիր-երկատող մը պէտք է գրես, ուղղուած՝ Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան... եւ գաղտնիք մը բացայալուողի հազիւ լսելի ձայներանգով հաղորդեց, որ մասնաճիւղը Սկաուտական որհուրդի ատենադպիրի պէտք ունի... եւ պատրիկելով որ ներկայացուած առաջարկը չըլլայ որ մերժեմ, «մնաս բարովի»ով մը մեկնեցաւ:

Գիտէի որ եղբ. Արշակունին վարչութեան մնայուն ատենապետն է եւ եղբ. Յակուրը անոր մնայուն գործակիցներէն:

Կարդացած էի, որ մասնաճիւղը առաջինին տան մէջ հիմնըւած է եւ երկրորդը՝ անոր հիմնադպիր անդամներէն է: Ծանօթ էր ինծի, որ երկուքն ալ շրջանին մէջ տարիներու ազգանուէր գործերով վարկ շահած եղբայրներ են:

Վերջապէս այդ օր, առաջինը «Կեդրոնի» կամքն ու աշխատանքները հունաւորողն էր եղած, երկրորդը այդ կամքը ճշգուած հասցէին փոխանցող հաւատարիմ պատգամաթերը:

Օրը իրիկուն չեղած, գրեցի եւ ինդրագիրը առաքեցի

կառուցելով համեստ բնակարան մը, առանձնութեան վերջ կու տայ:

Այդ ժամանակներուն է, Մըապատը յատկանչող հայաշէն մթնոլորտին մէջ, որ ճանչայ հայկազարմ «ամբողիները խելագարեցնող» տեսականներուն կախադական հմայքը:

Ու հոն է, որ սկսան յուշերու լայն պաստառին վրայ հետգհետէ պատուանդան նուածել ազգանուէր գործին նուիրուած, ազգին յաւերժութեան հաւատացող գաղափարապաշտ դէմքեր, ազգային իտէալներու շեփորումին ձօնուած հպարտառիթ դէպքեր, ամ-

ակումբ: Ունոյնքան արագ վաւերացումէ ետք, հրաւիրուեցայ յաջորդ օրն իսկ ստանձնելու ինծի վերապահուած պարտականութիւնու:

Հաճելի անակնկալ եղաւ, անշուշտ, Տէրունական օրով ինծի հասած, ու հանրամեծար անձերու կողմէ առաքուած, պատասնեկան ինքնասիրութիւնս փայփայող առաջարկը:

Հ.Մ.Լ.Մ.ի հանդէպ տածած անվերապահ սիրովս, ազգային կեանքին բանով մը օգտակար դառնալու մշտարձարծ ցանկութենէն մղուած, դժուարութիւն չունեցայ ձեռք բերելու յանձնառութեանս մէջ յաջողելու հարկ եղած միութենական կենսափորդ ու կազմաւորում:

Շուտով ծանօթացայ ազգանուէր այդ ընծայարանին՝ Պուրճ Համուտապրոշմ գործելածելին, իրենց քրտինքով ու վաստակով «ազատ հայրենիքի ճամբայ հարթող» Հ.Մ.Լ.Մ.ադաւան քուրմերու անձնդիր կենցաղակերպին:

Հասկցայ, թէ ինչո՞ւ Պուրճ Համուտը արժանացած է «հայութեան սիրտը», «գաղթաշխարհի հայութեան բազկերակը» կամ «Սփիւռքի միջնաբերդը» բանաձեւումներով տրուած եզակի բնութագրումներու:

Եւ ինչո՞ւ, այդ բոլորէն առինքնուած, տարաշխարհէն մեծանուն դէմքեր պատասխանատու ազգայիններ այցելած են այդ միջնաբերդը եւ յարդանօք ողջունած, իրենց կարգին, այնտեղ տիրող Պուրճ Համուտապրոշմ ոգին:

ՍԻՐԱՎԿԱԾՆԵՐ...

Դժբախտաբար, կենսախինդ ու ոգեշնչող մժնոլորտի մը մէջ անցած միութենական ժամանակաշրջանս տեւեց քանի մը տարի, ու ես երկրորդականի ուսանող՝ նկատեցի օր մը, որ առաջին սէրս, բորբոք ձգելով հանդերձ, կեանքի նաւակը տարած է զիս ու յանձնած նոր սէրերու գիրկը:

Մանկութենէս սիրած եմ հայ գրականութիւնը:

Երբեմն, դպրոցական հանդէսներուն բեմ հանուած եմ, իբրև արտասանական առողջապահութեամբ օժտուած տղայ:

Երբեմն-երբեմն ինքպինքս գտած Պուրճ Համուտի Հ.Մ.Լ.Մ.ի, ԼՕհիի, թաղային այլ մարմիններու կազմակերպած ազգային տօնակատարութիւններու, յոբեկնական հանդիսութիւններու գեղարուեստական յայտագիրներուն վրայ: Զեռնարկներ, որոնք տեղի կ'ունենային ընդհանրապէս այդ օրերու ազգային-մշակութային, քաղաքական կեանքին մէջ հանրահռոչակ դէմքերու՝ Կարօ Սատունիի, Շաւարչ Մակարեանի, Լեւոն Շանթի ու Գասպար Իփէկեանի նախագահութեամբ:

(Նար. 1)

We Can Light Up A City

G.AYANIAN & SONS

Electricity
Pumps
Lighting
Air Conditioning
Video Phone

G. AYANIAN & SONS - BEIRUT

Dora: 01-255 222/3/4/5/6 Gemmayze: 01-447 000 - 447 940 Mobile: 03-627 728/9

Fax: 01-265 187 - 582 357 E-mail: gasons@dm.net.lb www.ayanian.com

«ՄԱՐԶԻԿ»Ի ԵՒ «Հ.Ա.Ս.Կ.»Ի ԿՆՔԱՀՈՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐԴԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ)

Միհրան Շիմշիրեան
ՊԵՅՐՈՒԹ

Դժուար է հաշտութիւն եղբ. Յարութիւն Գեղարդի մահուան գաղափարին հետ: Ու ամէն անգամ որ վերյիշենք զինք, ան մեր յիշողութեան կը ներկայանայ իբրև Լիբանանի Շրջանային Սկառտ. Խորհուրդի ատենապետ, որ 1960ականներու վերջերուն, բանակում մը ընթացքին, կը խօսի սկառտաներուն եւ անոնց կը բացատրէ Հ.Ա.Ս.Կ.ի չորս տառերուն խորհուրդը եւ միութեան ազգանուէր դերը:

Այսուհետեւ, եղբ. Յարութիւն Գեղարդը ճանչած ենք իբրև մշակոյթի մարդ, մտաւորական, Հ.Ա.Ս.Կ.ի կեղրոնական Վարչութեան անդամ եւ խանդավառ ջատագով մը «Մարզիկ» պաշտօնաթերթի: Գաղտնիք է, որ «Մարզիկ» պաշտօնաթերթի հաջորդական ակտուալ աշխատանքները:

ՑԱՒԱԿՑԱԳԻՐ

Հ.Ա.Ս.Կ.Ս.ի Կեղրոնական Վարչութիւն,
Պէյրութ, Լիբանան

Սիրելի վարչական եղբայրներ,
Խոր ցաւով իմացայ եղբ. Գեղարդի (Տոքք. Յարութիւն Գավանանձեանի) անսպասելի մահաւան տիտուր լուրը:

Խոր յուզումով կը մասնակցիմ Հ.Ա.Ս.Կ.ի մեծ ընտանիքին կորուստին եւ Կեղրոնական Վարչութեան սուզին:

Յարգա՞նք հաւատաւոր Հ.Ա.Ս.Կ.Ս.ականին, յարգա՞նք ազգային կեանքի բազմակողմանի իր գործունիքութեան, յարգա՞նք գրական իր վաստակին, յարգա՞նք եղբ. Գեղարդի միութեան երկարամեայ ծառայութեան՝ ի սպաս մեր սկառտական ու մարզական շարքերուն:

Այս տիտուր իրականութեան առջեւ ընդունեցք իմ խորազաց ցաւակցութիւններս: Կը խընդում ձեզ վշտակցութիւններս փոխանցել հանգուցեալ եղրօր հարազատներուն:

Թող Աստուած լուսաւորէ իր հոգին:
Մոնթրէալ

Եղբայրական զգացումներով՝
ՎԱՐՈՒԹԱՆ ՍԵՐՈԲԵԱՆ

թին անունը ի՞նք յղացած է: Մանրամասնութիւնները օրին պատմած է:

Այն ինչ որ պատմած չէ, սակայն, այն է՝ թէ Հ.Ա.Ս.Կ. Հայաստանի կազմակերպութեան անունն ալ (Հ.Ա.Ս.Կ.) իր յղացումն է:

Պատմութեան համար պէտք է արձանագրել, որ 1991ի ամբան, Հ.Ա.Ս.Կ. օրուան Կեղրոնական Վարչութիւնը որոշեց Հ.Ա.Ս.Կ. Հայաստանի խմբապետներու դպրոց-բանակում մը կատարել: Գրեթէ նոյն օրերուն, պարզ զուգադիպութեամբ մը, Լիբանանի սկառտական ֆետերասիոնին մեր անդամակցութեան բերումով, Պէյրութի մէջ առիթը ունեցանք ծանօթանալու Համաշխարհային Սկառտական Շարժումի ընդհանուր քարտուղար Ժամանակակից Սորէոնին, որ Լիբանան եկած էր ծանօթանալու սկառտական տեղույն շարժումին: Մեր խօսակցութիւններուն ընթացքին Սորէոնին յայտնեցինք, որ հայ ենք եւ Հայաստանի մէջ եւս սկառտական շարժում գոյութիւն ունի: Սկառտական մեր շարժումը՝ Հ.Ա.Ս.Կ. նիւթապէս եւ բարոյապէս կը զօրակցի Հայաստանի սկառտառութեան երգուածի մարդու առաջնորդութիւններու դպրոց-բանակում մըն ալ կազմակերպած է: Աւելի՞ն, իբրև ապացոյց մեր գործունէութեան լրջութեան, Սորէոնը առաջնորդեցինք նոյն օրերուն բանակում կատարող Հ.Ա.Ս.Կ. Անթիլիասի մասնաճիւղին բանակավայրը: Օրին, Սորէոն մեծապէս խանդավառութեան իր լսածներէն ու տեսածներէն, որովհետեւ անոր գլխաւորած Համազգային Սկառտական Շարժումը միջոցներ կը փնտուէր Հայաստան մուտք գործելու եւ հոն սկառտական շարժում ստեղծելու համար:

Նոյն տարին, Հ.Ա.Ս.Կ. եւ Պատգամաւորական Ժողովը Աթէնքի մէջ ընտակց Կեղրոնական Վարչութիւն մը, որուն մաս կազմեց նաեւ եղբ. Յարութիւն Գեղարդ: Կեղրոնական Վարչութիւնը իր առաջին նիստին որոշեց Փարիզ Հաստառուած եղբ. Գեղարդը լիազօրել՝ Սորէոնին հետ Հ.Ա.Ս.Կ. բանակցութիւնները կատարելու համար:

Հետեւաբար, 1991-1995, չորս տարի անընդհատ, եղբ. Գեղարդ նամակագրութեամբ եւ բանակցութիւններով մնայուն կապի մէջ եղաւ Սորէոնին հետ: Գրեթէ զուգահեռ, աշխատանք տարուեցաւ Հայաստանին՝ Հ.Ա.Ս.Կ. սկառտական պատասխանատուններուն կողմէ, յանգելու համար այն եղբակացութեան, թէ Համաշխարհային Սկառտական Շարժումին մօտ հայութիւնը ներկայացնող Հայ Արիներու միութիւնը պէտք է փոխարինուի Հայաստանի սկառտառութեամբ, Հ.Ա.Ս.Կ. նշանաբանը, կանոնագիրն ու դաւանանքը ընդունող սկառտառութեամբ, որ սակայն պիտի չկրէր Հ.Ա.Ս.Կ.



1995. եղբ. Յարութիւն Գեղարդ Հ.Մ.Լ.Մ.ի 6րդ Պատգամատրական ժողովին, Պրումանեա, Լիբանան: Զախէն աշ՝ եղբայրներ Վարուժան Գազանձեան, Ժագ Պոյամեան, Յարութիւն Գեղարդ, քոյր Սելլա Թնառուկեան, Աստում Թնառուկեան և Արա Յակոբեան:

անունը, որովհետեւ Համաշխարհային Սկաուտական Շարժումին չէին կրնար միութիւններ մաս կազմել, այլ՝ երկիրներ

առակով մը բիւրեղացնող եւ սրամիտ կատակով մը կացուածուածին կրնար միութիւններ մաս կազմել, այլ՝ երկիրներ թիւններ փրկող անկրկնելի տիպար, եզակի Հ.Մ.Լ.Մ.ական:

Ներկայացնող սկաուտական կազմակերպութիւններ (Հայ Արիներու օրինակը բացառութիւն էր եւ ունէր հին պատմութիւն):


Կը մնար, ուրեմն, Հ.Մ.Լ.Մ.ի Հայաստանի սկաուտութեան համար գտնել անուն մը, որպէսզի ան գրանցուէր Համաշխարհային Սկաուտական Շարժումին մօտ: Եւ ահա, եղբ. Գեղարդ հո՛ս է որ կը յղանար Հայաստանի Ազգային Սկաուտական կազմակերպութիւն, յապաւուած՝ Հ.Ա.Ս.Կ. անունը, որ կը վաւերացուէր Հ.Մ.Լ.Մ.ի Զ. Պատգամատրական ժողովին կողմէ 1995ին եւ այնուհետեւ կը դառնար Հ.Մ.Լ.Մ.ի Հայաստանի սկաուտութիւնը ներկայացնող պաշտօնական անունը:

Այս բոլորը պատմութեան յանձնելով, չենք կրնար մոռնալ եղբ. Գեղարդը: Չենք կրնար մոռնալ զինք, մանաւա՞նդ, իբրեւ իր տեսակէտները ամուր պաշտպանող, դժուար պահերու միտքերը

BDF •••			
NIVEA Creme	NIVEA Hair Care	NIVEA for Men	Schwarzkopf PROFESSIONAL
NIVEA VITAL	NIVEA VISAGE	NIVEA Beauté	b bonacure
NIVEA Shower	NIVEA Soap	NIVEA sun	IGORA VARIO BLOND PLUS
NIVEA Soft	NIVEA نیفیا	NIVEA DEODORANT	Vital STYLING
atrix	LIMARA	labello	Clynol hair
MATIS	Degussa		Bodycology
			VITN VitaTrace Nutrition Ltd

Հ.Մ.Լ.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ

- Պ. -



Պետրոս Շեմմեսեան ՊԷՅՐՈՒԻԹ

«4. Ան զուսպ է իր արտայայտութիւններուն կամ շարժումներուն մէջ եւ նախանձախնդիր է իր պատկանած միութեան բարոյականին»:

Մարզիկ մը Հ.Մ.Լ.Մ.ին անդամագրուելով ինքնարեւաբար մաս կը կազմէ միութեան մէծ ընտանիքին եւ կը դառնայ անոր մէկ անդամը, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ մաս պիտի կազմէր իր հարազատ ընտանիքին: Հետեւաբար, այն նախանձախնդրութիւնն եւ գուրգուրանքը, զոր ան կը ցուցաբերէ ընտանիքին բարոյականին նկատմամբ, կը սպասուի որ ցուցաբերէ նաեւ միութենական ընտանիքի անդամներուն հանդէպ: Եւ ինչպէս ընտանիքի անդամին վարքն ու բարքը հարազատ պատկերը կուտ տայ, թէ ինչպիսի ընտանիքի մը անդամ է ենթական, նոյն պատկերը կը ստանայ դուրսէն դիտողը, թէ ինչպիսի միութեան մը կ'անդամակցի ինտրոյ առարկայ անձը:

Ահա թէ ինչու, Հ.Մ.Լ.Մ.ական իւրաքանչիւր մարզիկ պէտք է զուսպ ըլլայ իր արտայայտութեան եւ նկատ ու կացին մէջ: Մարզիկ իրմով իր պատկանած միութիւնը կրնան դատել:

Հ.Մ.Լ.Մ.ի անդամագրուելով, Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկը կամովին կը հրաժարի իր սանձարձակ ազատութենէն եւ կ'ընդունի ապրիլ ազատութեան մը մէջ, որ սահմանագծուած է միութենական կանոնագիրով եւ ժողովներու որոշումներով: Ան կը նկատուի իր միութեան դիմագիծը, ուր որ ալ գտնուի: Մարզիկ իրեն չեն նայիր իւրեւ սոսկական անձ, թիւ, այլ՝ անոր կը նային Հ.Մ.Լ.Մ.ի պրիսմակէն:

Մարզիկ երբ նային Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկին, դիւրութեամբ պէտք է կարենան զանազանել զայն ոչ-Հ.Մ.Լ.-

Մ.ական մարզիկէն: Մարզիկ երբ անոր հետ խօսին եւ փորձեն զայն աւելի մօտէն ճանճնալ, պիտի տեսնեն, թէ անոնք գործ չունին մարզական պարզ ակումբի մը մէկ անդամին հետ, այլ՝ գործ ունին համաշխարհային կառոյցով միութեան մը մէկ անդամին հետ:

Անոնք պիտի նկատեն, որ մարզիկէն ու մարզականէն առաջ, իրենք գործ ունին յանձնառու միութենականի մը հետ, որուն համար մարզակերտումը, հայրենասիրութիւնը, ազգային արժէքներու հանդէպ յանձնառութիւնը գերազանց կը նկատուին՝ վարչական ընթացիկ իրագործումներէ:

Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկին այս նկարագիրը պիտի արտացոլայ իր առօրեայ նիստ ու կացին ընդմէջէն: Իր իւրաքանչ չափումը պիտի դիտուի իւրեւ միութեան չափումը: Մէկ խօսքով, ինք հայելին պիտի ըլլայ իր պատկանած մէծ միութեան՝ Հ.Մ.Լ.Մ.ին: Ահա թէ ինչու ան զուսպ եւ ուշադիր պիտի ըլլայ իր իւրաքանչիւր խօսքին եւ արարքին մէջ:

Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկին միութենական այս նկարագիրը իրմէ անբաժան կը մնայ իր կեանքին ամբողջ տեւողութեան: Աւելին, երբ մարզիկ մը անդամական երկար տարիներէ ետք անցած է իր գործունէութեան տարիքային եւ ֆիզիքական կազմաւորման սահմանները, ու դարձած է չափահաս եւ հաւատաւոր միութենական, երկար տարիներու ընթացքին, մինչեւ խոր ծերութիւն, իրմէ անբաժան կը մնան Հ.Մ.Լ.Մ.ական տիպը մարզիկի նկարագրային հիմնական գիծերը:

Մէկ խօսքով, ի տես Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկի մը, մարզիկ պիտի կարենան անվարան ըսել, թէ «ահա՝, այս մարզիկը որ կ'անցնի, անպայման Հ.Մ.Լ.Մ.ական մարզիկ ըլլալու է»:

Մարզական հանդիպումներուն իր կեցուածքով եւ վարւելակերպով Հ.Մ.Լ.Մ.ականը հանդիսատեսներուն անպայման ըսել պիտի տայ, թէ այս մարզիկը իսկական օրինակելի մարզիկ է, Հ.Մ.Լ.Մ.ական տիպա՞ր մարզիկ է:

Հ.Մ.Լ.Մ.Լ ԶԱՒԱԽԻ ՄԵՋ

Թղթակից
ԱԽԱԼՔԱԼԱՔ

Զաւախիքում սկառուտական աշխատանքների կազմակերպումը սկսուել է 2000ից, իսկ 2001ին արուել են կազմակերպական առաջն քայլերը:

2002-2004, Հայաստանից գործուղուած աստիճանաւորների կողմից սեմինարներ են կազմակերպուել Ախալքալաքում, Ախալցիսայում, Գանձայում եւ Ծալկայում: Սեմինարների նպատակն էր հայ համայնքի երեխաներին ծանօթացնել սկառուտական գործունէութեանը եւ ներգրաւել նրանց շարժման մէջ:

2002ին կազմակերպական աշխատանքները շարունակուեցին ամիսը 1-2 անգամ. եղան այցելութիւններ՝ կենտրոնական վարչութեան պատասխանատուի եւ խմբավետների կողմից:

Մայիսին, այցելութիւններից յետոյ որոշուեց կազմակերպել դպրոց-բանակում, որի նպատակն էր Զաւախիքում կազմակերպել առաջին սկառուտական բանակումը, փոխանցել սկառուտական գիտելիքներ, ընտրել մասնակիցներ համահայկական 7րդ բանակումին մասնակցելու համար: Բանակումը տուեց իր դրական արդիւնքները:

2002ի Յուլիսին, Գանձայում կազմակերպուել է եռօրեայ բանակում, որին մասնակցել է 35 սկառուտ (Ախալքալաք 15, Ախալցիս 8, Սաթիս 5, Գանձա 6 եւ Զիդրաշէն 1): Հստ մասնակիցների աշխուժութեան եւ քննութեան արդիւնքների, 10 լաւագոյններն ընտրուել են մասնակցելու համահայկական 7րդ բանակումին:

Հոկտեմբեր ամսափ շարունակուել են այցելութիւնները վշան: Սակայն եղել են զանազան դժուարութիւններ: Այնուհետեւ, գործունէութիւնը շարունակուել է Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.ի կենտրոնական վարչութեան կողմից տրամադրուած միջոցների եւ նույիրատուութիւնների շնորհիւ:

Նոյեմբեր ամսին եղել է գործուղում կենտրոնական վարչութեան ներկայացուցիչների եւ 2 խմբավետների մասնակցութեամբ: Նոյն կազմով այցելութիւնները շարունակուել են Յունուարի 31ից Փետրուարի 2-ը Այս այցելութիւնների հիմնական նպատակը եղել է տեղի աստիճանաւորական կազմի հետ աշխատանքը, նոր խմբերի ձեւաւորումը, աստիճանաւորական սեմինարի կազմակերպումը, աստիճանաւորական խորհրդի ձեւաւորումը: Փետրուարի 6-10ը եղել են այցելութիւններ շրջաններ եւ կազմակերպուել է աստիճանաւորական սեմինար, որի վերջում ընտրուել է խմբավետական խորհրդի վերջինը կերպութիւնական վարչութեան ներկայացուցչի մասնակցութեամբ հարակիրել է հիմնադիր ժողով, ընտրել է



դիւան, կազմել ծրագիր եւ նախահաշիւ:

Խմբավետական խորհուրդը լրիւ կազմով մասնակցել է Ծալկաձորում կազմակերպուած Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Կ.ի սեմինար-բանակումին, որտեղ քննութիւններից յետոյ անդամներին շնորհուել են աստիճաններ:

2003-2004ին կազմակերպուել է երգման երկու արարողութիւն, որոնցից մէկին մասնակցել են նաեւ Երեւանի սկառուտները:

2002-2004ի ընթացքում Զաւախիքի սկառուտները մասնակցել են համա-Հ.Մ.Լ.Մ.ական բանակումին, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի համահայաստանեան բանակումներին, սեմինարներին, միջոցառումներին, ձեռք են բերել բաւականաչափ փորձառութիւն:

2004-2005ի ձմրանը կազմակերպուել է Ամանորեայ մեծ միջոցառում, ձմեռնային մարզաձեւերի մրցոյթ, որին մասնակցել են ոչ միայն սկառուտներ, այլ նաեւ՝ դպրոցականներ եւ ուսանողներ: Աշխատանքներ են տարւում կազմակերպա-



կան կառույցը ընդլայնելու ուղղութեամբ, տեղում գործում է խմբապետական խորհրդի կողմից նշանակուած մնայուն գործիչ, գործում է նաեւ աստիճանաւորական խորհուրդ, որի անդամների աստիճանները շնորհուել են Հայաստանում տեղի ունեցած աստիճանաւորական սեմինար-բանակումների ընթացքում: Նախատեսում է նաեւ տեղում ձեւաւորել վարչութիւն՝ կազմակերպական աշխատանքների աւելի հեշտացման նպատակով:

2005ի ձմրանը Զաւախքի սկաուտները մասնակցել են Ծաղկաձորում տեղի ունեցած խմբապետական բանակումին:

2005ի Յուլիսի 24-27ը 5 հոգի մասնակցել է Բիւրականում կայացած մնայուն դպրոցի:

Զաւախքի սկաուտները նաեւ մասնակցել են.-

● 2001

Մայիսի 4-6, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կենտրոնական գրասենեակում կազմակերպուած վարչականների սեմինարին (3 հոգի):

Յուլիսի 8-12, Բ. կարգի համահայստաննեան սեմինարին, Բիւրական (3 հոգի):

Յուլիս 12-20, Համահայստաննեան բանակումին՝ նուիրւած Քրիստոնէութեան պետական ճանաչման 1700ամեակին (6 հոգի):

Օգոստոս, Զաւախքի տարեկան բանակումին, Ախալքալաք (60 հոգի):

Սեպտեմբեր, Ա. կարգի սեմինարին, Երեւանում (4 հոգի):

Սեպտեմբերի 21-23, Նորընծայ եւ Բ. կարգի սեմինարների՝ Զաւախքում: 4 սկաուտներ ստացան Բ. կարգ, իսկ 3 սկաուտներ Նորընծայ:

● 2002

Ապրիլ, Նորընծայ կարգի սեմինար՝ Ախալքալաքում (24 հոգի):

Յուլիս, Բիւրականում անցկացուած տարեկան բանակում (12 հոգի):

Յուլիսի 19-21, եռօրեայ դպրոց-բանակում՝ Գանձայում. 37 մասնակից Ախալքալաքից, Ախալցիայից, Սաթիսայից, Գանձայից, Փոկայից, Ջիդրաշէնից:

Յուլիս, Համահայստական 7րդ բանակում (8 մասնակից):

Օգոստոսի առաջին կէս, գայլիկ պատասխանառուների սեմինար Բիւրականում (6 հոգի):

Սեպտեմբեր, Ա. կարգի սեմինար Երեւանում (12 մասնակից):

● 2003

Ապրիլի 2, երդման արարողութիւն՝ Ախալքալաքի Ա. աշ եկեղեցու բանակում (35 սկաուտ):

Ապրիլ, Հ.Մ.Լ.Մ.-ի պաշտօնական գրանցում Բոգդանովկայում:

Յունիս, մասնակցութիւն Հ.Մ.Լ.Մ.-ի 8րդ Պատգամաւորական ժողովին (1 հոգի):

● 2004

Մարտի 26-28, Նորընծայ կարգի սեմինար-բանակում, 35 նորագիր, 13ը մասնակցել են երդման արարողութեան:

Ապրիլի 24ին նուիրուած միջոցառումներ են կազմակերպըւել Ախալցիայում, Ախալքալաքում, Գիմբիրդայում, Ղարզախում եւ Բոգդանովկայում:

Յուլիսի 7ը, Արշաւ-բանակում Ախալցիա-Սուխիսի ամանոց-Պանդուի (27 մասնակից):

Հոկտեմբերի 6-10, Ախալցիայի եւ յարակից գիւղերի բանակում Սուխիսի ամարանոցներում (35 մասնակից):

Դեկտեմբերի 9-11, մասնակցութիւն Գիմբիրում կազմակերպուած սեմինարին, 2 հոգի որպէս աստիճանաւոր:

Դեկտեմբեր, Ամանորեայ մեծ միջոցառում եւ ձմեռնային մարզաձեւերի մըցոյթ՝ սկաուտների, ուսանողների եւ դպրոցականների մասնակցութեամբ:

● 2005

Քետրուար, մասնակցութիւն Ծաղկաձորում կազմակերպուած Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մնայուն դպրոցի գործնական սեմինարի առաջին փուլին:

Յունիսի 24-27ը, մասնակցութիւն Բիւրականում կազմակերպուած Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի մնայուն դպրոցի գործնական սեմինարի երկրորդ փուլին (5 մասնակից):

Այս ամէնից բացի, Հ.Մ.Լ.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ներկայացուցիչները ժամանակ առ ժամանակ գործուղուել են Զաւախք, աշխատանքների հետեւելու եւ ծագած խնդիրների տեղում լուծումներ տալու համար:



Հայկական
Ցեղասպանութեան
90ամեակին առիթով,
Բ. Եաւորովի տուն-
թանգարանին առջեն:

Հ.Մ.Լ.Մ.Ի ՊՈԽԿԱՐԻՈՅ ԾՐՋԱՆԸ ԵՐԵԿ ԵՒ ԱՅՍՈՐ

Կարապետ Կէմճեան ՍՈՅԻԱ

Երկար նախապատրաստութիւններէ ետք, 16 Նոյեմբեր 1918ին, Պոլիս, Գրիգոր Յակոբեանի գրասենեակին մէջ հրաւիրուած խորհրդակցութեան մը ընթացքին ծնունդ կ'առնէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը: Շուտով կը կազմուին մասնաձիւղեր, որոնց թիւը կը հասնի 23ի: Յ. Ճ. Միրունի (Յակոբ Ճողովեան), Գրիգոր Յակոբեան եւ Տիգրան Խոյեան կը պատրաստեն միութեան Ծրագիր-Կանոնագիրը: Միութեան նպաստակ կը ճշգուհ պատրաստել Փիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ: Սորվեցնել ըլլալ չարքաշ եւ արի, ազգասէր եւ հայենասէր, օրինապահ եւ կարգապահ: Նշանաբան կ'որդեգրը ւի «Բարձրացիր-բարձրացուր»ը:

Հ.Մ.Լ.Մ.ի անդրանիկ կեդրոնական Վարչութիւնը կը կազմակերպէ ձրի դեղարան եւ շարժուն հիւանդանոց: Երկու ամսուան ընթացքին կը ինամուկին շուրջ 1500 դաշտականներ: Անոնց կը հայթայթուի փայտ, իբրեւ վառելանիւթ:

Հայաստանի կրթութեան օրուան նախարար՝ Նիկոլ Աղբալեանի խնդրանքով հայրենիք կը գործուղուին մարդագանքի ուսուցիչներ՝ Վահան Զերազ, Տիգրան Խոյեան եւ Օննիկ Եազմաճեան, նուիրուելու հայրենիքի ծառայութեան եւ հազարաւոր որբերու դաստիարակութեան:

Մինչ այդ, քեմալական շարժումը կը հասնի իշխանութեան գլուխ: Հ.Մ.Լ.-Մ.ի կեդրոնական Վարչութիւնը, ստիպւած, 16 Սեպտեմբեր 1922ի իր նիստին կ'որոշէ Թուրքիոյ մէջ լուծուած յայտարարել միութիւնը, Սփիտուքի մէջ շարունակելու համար ազգապահպանման նուիրական իր առաքելութիւնը:

ՀԻՆ ՕՐԵՐԸ

Պոլիսէն դուրս, Հ.Մ.Լ.Մ.ի առաջին մասնաձիւղին հիմնադրութիւնը կը կատարուի, Փարիզի հետ գուգընթաց, Պուլկարիոյ Վառնա քաղաքը, 1920ի ամրան: Շատ չանցած իրարու ետեւէ կը հիմնուին Փլուգիվի եւ Ռուսէի մասնաձիւղերը 1921ին, Սոֆիայի մասնաձիւղը 1922ին, Սլիվէնի մասնաձիւղը 1923ին, Պագարճիքի, Պուրկասի եւ Սթարա Զակորայի մասնաձիւղերը 1924ին, Խասքովոյի եւ Շումէնի մասնաձիւղերը 1925ին, Այթոսի եւ Պորիսովկատի մասնաձիւղերը 1930ին :

Մասնաձիւղեր կը ստեղծուին նաեւ Տոպլիչ եւ Սիլվիթրա քաղաքներուն մէջ, որոնք այդ տարիներուն եղած են Ռումանիոյ սահմաններուն մէջ:

Բոլոր մասնաձիւղերը, առանց բացառութեան, մարզական գետնի վրայ կ'ունենան բեղուն գործունէութիւն: Յաջողութիւնները կ'ըլլան բարձր մակարդակի: Անշուշտ, օրուան չափանիշերուն համեմատ: Փլուգիվի աթէթ-

ները կը մասնակցին Պալքանեան մրցումներու, իսկ Վառայի ֆութպոլիստները կը խաղան Պուլկարիոյ ազգային խումբէն:

Հ.Մ.Լ.Մ.ի Պուլկարիոյ Շրջանային Վարչութեան անդրանիկ ժողովը տեղի կ'ունենայ 26 Հոկտեմբեր 1924ին: Առենապետ կ'ընտրուի տոքթ. Թովմաս Թովմասեան, ատենադըպարի՝ Կարօ Ղազարոսեան (Կ. Մեհեան): Մինչեւ 1936, Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ 9 ողիմպահականներ, 7ը՝ Փլովտիվ, 1ը՝ Սոփիա եւ 1ը՝ Վառնա:

Ցաւ ի սիրտ, **Հ.Մ.Լ.Մ.ը Պուլկարիոյ մէջ կը գործէ մինչեւ 1944, երբ Համայնավար բունատիրական վարչակարգի կարգադրութեամբ կ'արդիւին բոլոր կազմակերպութիւնները եւ անոնց ղեկավարներէն շատերը կ'աքսորուին Սիակերիա:**

ՆՈՐ ՕՐԵՐԸ

Պուլկարիոյ Հ.Մ.Լ.Մ.ը նոր օրերու իր վերածնունդը դիմաւորեց 1991ին եւ վերանորոգեց իր ուխտը՝ ծառայելու Հայաստանին: Այսպէս, 27 Մարտ 1991ին վերականգնեցաւ Սոփիայի մասնաճիւղը, 15 Սեպտեմբերին՝ Փլովտիվի, 21



Մեծ Եղենի յուշարձանին առջեւ գրական մատուցում:

Դեկտեմբերին՝ Ռուսէի, իսկ 1992ի գարնան՝ Վառնայի մասնաճիւղը: Յետոյ՝ 31 Մայիս 1997ին Շումէնի, իսկ 9 Յունուար 1999ին Պուրկասի մասնաճիւղերը: Նոյն տարին՝ նաեւ Ծոպորից:

Վերականգնումի առաջին օրէն իսկ, քաղաքի մնացեալ կազմակերպութիւններուն հետ, Հ.Մ.Լ.Մ.ը աշխոյդ մասնակցութիւն ունեցաւ գաղութի հանրային բոլոր ձեռնարկներուն (Վարդանաց, Ապրիլ 24, Մայիս 28, Սեպտեմբեր 21):

Շրջանի գործունէութիւնը համագրելու նպատակով, սկզբնական տարիներուն կը կազմակերպուէին տարեկան երկու, երեք, նոյնիսկ երեսմն չորս խորհրդաժողովներ, որոնց կը մասնակցէին շրջանի գրեթէ բոլոր մասնաճիւղերու վարչութիւնները: Այդ հանդիպումներուն կը ճշգուէին մանրամասնութիւնները բանակումներու, յոբեկնական հանդիպումներուն եւ այլն:

1990 ական թուականներուն շրջանը յաջողեցաւ



Իկութա. բանակումի մասնակիցներ:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական ընդհանուր բանակումներուն Հայաստան ուղարկել 15 սկառու (1994ին՝ 3 սկառու, 1998ին՝ 5, 2002ին՝ 7): 20 սկառուներ ալարիթը ունեցան մասնակցելու Յունաստանի շրջանի բանակումներուն (1993ին՝ 10 ըսկառու, 1995ին՝ 10): 6 այլ սկառուներ մասնակցեցան ՀՕՄի բանակումին, Խալքիտիքի մէջ:

Հ.Մ.Լ.Մ.ի Պուլկարիոյ շրջանը մասնակցեցաւ միութեան վերջին երեք Պատգամաւորական ժողովներուն (1995, 1999, 2003), ինչպէս նաեւ՝ 1997ի եւ 2001ի միջ-դիւանական խորհրդաժողովներուն:

Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 7րդ մարզայակերուն, Յուլիս 2005ին, Աթէնք, Պուլկարիոյ շրջանէն մասնակցեցաւ Վառնայի մասնաճիւղը՝ վոլիպոլի տղոց խումբով:

Վերականգնումէն մինչեւ օրս, Հ.Մ.Լ.Մ.ի Սոփիայի մասնաճիւղին շարքերէն անցած են մօտաւորապէս 120 պատանիներ, որոնցմէ շատեր յաջողութեամբ աւարտած են լաւագոյն համալրաները: Ոմանք Հայունակցին իրենց գործունէութիւնը Հ.Մ.Լ.Մ.ի մէջ եւ նախընտրեցին մաս կազմել երգչախումբի, թատերախումբի եւ երիտասարդական կազմակերպութեան: Նոյնիսկ եկեղեցւոյ խորանը ունեցանք երկու ծառայողներ: Մեր արիները եւ արենոյշները հաւատարիմ մնացին եկեղեցւոյ մէջ իրենց առւած խոստումին: Զանազան հանգստառուներու մէջ, ուր կ'ըլլային մեր բանակումները, ծառայողներու ուշագրութեանէն չէր վրիպած մեր սկառուներուն վարքը, օրը երեք անգամ «Հայր մեր» արտասանելու հեղութիւնը: Անկեղծօրէն, անոնք կ'ըսէին, որ մերինները կը տարբերին աշակերտական ուրիշ խումբերէ:

Կ'ընդունինք, որ ցարդ չյաջողեցանք տղոց հայերէն խօսելու վարժութիւն տալ, բայց այդ կարելի չէ, երբ ծնողները իրենք տան մէջ չեն գործածեր մայքենի լեզուն: Հակառակ որ Հ.Մ.Լ.Մ.ի մէջ հայկական ջերմ միջավայր ստեղծելով որոշ գոհացում կը ստանանք: Բայց, ցա-



Սկաուտական խոստման արարողութիւն:
Աշխա` եղբայրներ Կարապետ Կէմճեան և Խորեն Քիրազեան:

ւով կը հաստատենք, որ պուլկարահայութիւնը չի գիտակցիր, որ այս ընթացքով ինք եւս կրնայ մատնուիլ կորսուած այլ գաղութներու ճակատագրին:

Վտանգաւոր ժամանակներ կ'ապրինք, ամէն տեսակ փորձութիւններով լեցուն կեանք մը: Եթէ ծնողներ կը փափաքին շաբաթը գէթ քանի մը ժամի բենց զաւակները հեռու պահել այդ բոլորէն՝ թող իրենց զաւակները արձանագրեն Հ.Մ.Լ.Մ.ի:

Մեր գործունէութիւնը չափազանց դժուարացած է, որովհետեւ մեր գաղութի, մասնաւորապէս Սոֆիայի պատանիներուն թիւը շատ նուազած է: Սոֆիայի Ուկիլը Սարոյեանի անուան դպրոցը նախապէս կը յաճախէին 70-80 հայ աշակերտներ, մինչդեռ հիմա աշակերտութեան թիւը հազիւ կը հաշուէ 15-20 հոգի: Միւս կողմէ, պատանիներու հետ աշխատող կազմակերպութիւններուն թիւն ալ աւելցած է: Կը մնայ ծնողներու ազգասիրական որոշումը՝ իրենց զաւակները հայ պահելու համար:

Maison Mere
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt
Tel: (202) 3913296 - 3918542
Fax: (202) 3903899

Ramsey Hilton
Tel: (202) 5758000 - 5744400
Direct: (202) 5751790

Zamalek
11 Hassan Sabry st., Degla center
Tel: (202) 3322121 - 3322130
Fax: (202) 3322130

VARTAN
KAZANDJIAN

KAZANDJIAN

E-mail: vartan@intouch.com

Joaillier-Orfevre Fonde en 1920

ՆՈՐՎՅԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ՝ ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖԵԱՆԻ ԹՂԹԱՊԱՆԿԵՆ



Հ.Մ.Լ.Մ.ի արխիւները հարստացնող կարեւոր փաստաթղեր են այս էջերով ներկայացուած նամակները, որոնք կը հրատարակուին առաջին անգամ ըլլալով: Անոնց բնօրինակներուն ձակատագիրը անծանօթ է: Հուսապատճենները գտնուած են Զարիֆեանի ազգականներէն՝ Եղանակ Աձէնեանի մօտ եւ Համազգայինի ձեւարանի տնօրէնութեան կողմէ տրամադրուած են «Մարզիկ»ին:

Նամակներէն մէկը Զարիֆեանին ուղղուած է Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ՝ 1 նոյեմբեր 1920ին: Նամակ մըն ալ յուղուած է Հ.Մ.Լ.Մ.ի Սկիւտարի մասնաճիշին կողմէ՝ 29 Օգոստու 1921ին (նամակին լուսապատճենը, օրին, նկարի ձեւով լոյս տեսած է Տիգրան Քինու Խոյեանի «Նահատակ ցեղի անմահներ» գիրքին մէջ, էջ 45): Այդ տարիներուն Զարիֆեան մարմնամարզի ուսուցիչ էր Սկիւտարի Պէրակերեան վարժարանին մէջ:

Երեք գրութիւն, նամակ մը եւ երկու նօր, Զարիֆեանի հասցէագրուած են Սկիւտարի Հայ Մարմնամարզարանին կողմէ, իսկ նամակ մըն ալ՝ Ս. Խաչ երկսեռ վարժարանի տնօրէնութեան կողմէ:

Մեծայարդ պարոն Մատթէոս Զարիֆեան

Աստ

Սիրելի բարեկամ եւ պաշտօնակից,

Փափաքելով որ Ս. Խաչ վարժարանի երկսեռ աշակերտութիւնը մարմնամարզի կանոնաւոր դասընթացք մը ունենայ, տնօրէնութիւնս դիմում կ'ընէ Ձեր ազնուութեան, որպէսզի կամ մ դուք անձամբ, եւ կամ Ձեր կողմէ ընտրուած ուրիշ յարմարագոյն մարզիչի մը միջոցաւ հաճիք անձնուիրաբար ըստանձնել այս կարեւոր դասը:

Յուսական այն մասնաճիշին չէք թողուր խնդրանքս, որ Ձեր սրտին այնքան մօտիկ եղող ձեռնարկի մը շուրջ կը դառնայ, կանխայաց չորհակալութեանց հետ Ձեզ կը մատուցանեմ խորին յարցանքներս:

24 Փետր. 1920

Սկիւտար

Գ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Տնօրէնութիւն

18 Յունիս 1920

Ս. Խաչ Երկս. Վարժարանաց

Սկիւտար (Սելամիէ)

Մեծայարդ պրո. Մատթ. Զարիֆեան

Ազնիւ բարեկամս,

Մարմնամարզի քննութեան համար բոլոր աշակերտները

ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ



Եղերաբախտ բանաստեղծ-մարզիկ Մատթէոս Զարիֆեան ծնած է 1894ին, Պոլիս (Կէտիկ Փաշա): Թափառած է դպրոցի դպրոց- Պէրակեան, Պարտիկակի Ամերիկեան Բարձրագոյն Վարժարան, Ռոպէրթ Գոլէճ, յետոյ կրկին Պէրակեան, զոր աւարտած է 1913ին: Կը մեկնի Ատանա, իբրև մարզանքի ուսուցիչ: Հոնէկ Լիբանան կ'անցնի դարմանելու իր վտանգուած առողջութիւնը: Պոլիս դարձին՝ ուսուցիչ է Պէրակեանի մէջ: 1921ին այլեւս չի կրնար շարունակել դպրոցը ու Մէծ Կոչի կ'առանձնանայ՝ դարմանելու իր հիւծած մարմինը: Մահը զինք հոն կը գտնէ 1924ին:

Զարիֆեան առանձին հատորներով հրատարակած է «Տրտուրեան եւ խաղաղութեան երգեր» (1921), «Կեանքի ու մահուան երգեր» (1922) գործերը: Ունեցած է անաւարտ վէպ մը, որուն ձեռագիրները կորսուած կը նկատուին:

Բանաստեղծ Զարիֆեան եղած է նաեւ մարմնամարզի սիրահար մը: 1912ի հայկական Բ. ողիմպիականին ան առաջին կը հանդիսանայ երեք քայլ ուսումի, երկրորդ՝ գունդ նետելու եւ երրորդ՝ սկավառակ եւ նիզակ նետելու մրցումներուն: 1911 Օգոստու 28ին, ան ախոյեան կը հանդիսանայ «Բաֆֆի» միութեան տարեկան մրցաշարքին:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

տրամադրելի են յառաջիկայ ԲՀ. օր, ժամը 4էն սկսեալ: Կը յուս սամ որ Զեզի համար եւս այդ պահը անյարմարութիւններ չ'ունենար:

Վարժարանիս կարօտ ուսանողաց խնամակալութիւնը ներկայացում մը կու տայ այս Կիրակի գիշեր. դուք եւս կը հրաւիրութիք ներկայ գտնուիլ իբրեւ դպրոցի ուսուցիչներէն մէկը: Ներփակ զրկուած տոմսը տապագրուածներէն չէ՝ պարզապէս քոնքրովի դիւրութեան համար:

Բարեւներով
Գ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

27 Սեպտ. 1920
Սկիւտար

Յարգելի պարոն Մատթէոս Զարիֆեան

Աստ

Հայ Մարմնամարզարանի տարեկան աթլեթիկ խաղերու մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ Կիրակի օր:

Զեր, Միութեանս հանդէպ ունեցած համակրանքնուդ վրայ վստահ, ներփակ Զեզ կը զրկեմ երեսուն հատ դպրոցականներու յատուկ տոմսակ, Պէրպէրեան վարժարանի աշակերտութեան բաժներու համար:

Կանխաւ շնորհակալութիւններով
Յարգանօք
Ժ. ՄՄԲԱՏԵԱՆ

Հայ Մարմնամարզարան
Սկիւտար

28 IX 1920

Յարգելի պըն Մատթէոս Զարիֆեան

Աստ

Ազնիւ Տիա՛ր,

Հայ Մարմնամարզարանի տրկն. [տարեկան «Մ.»] 7րդ ողիմապ. խաղերու սարքումին առթիւ ժողովս կու դայ հրաւիրել զքեզ սոյն հանդէսին նաշտ. դատաւորի պաշտօնը մատուցանելով:

Ուստի կը ինդրէ քեզմէ, որ բարեհաճիք ներկայ գտնուիլ այս Կիրակի, 3 Հոկտ. 1920 ժամը 1ին (կ.ե.) հանդէսին խաղավայրը:

Կանխայայտ շնորհակալութեամբ
Ի դիմաց քէփիթըններու ժողովի
Քէփիթըն
ՀԱՅԿ ԱԴԱՄԵԱՆ

Հայ Մարմնամարզարան
Սկիւտար

Սեպտ. 30, 1920

Սիրելի Զարիֆեան
Կընալիք մեր մրցումներուն օրը տասի չափ սկառատներ

տրամադրել կարգապահութեան հսկելու համար: Գիտեմ որ մերժել չէք դիտեր, ուրեմն

Շնորհակալութիւններ
Եւ Սիրով Զերդ
[Ստորագրութիւնը անընթեռնի - «Մ.»]

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՀՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԱՅ-ՍԿԱՈՒՑՆԵՐ
ՀԻՄՆՈՒԱԾ
Կ. ՊՈԼԻՍ

1918

Թիւ 438

Յուլիսի 1 1920

Ազնիւ Պ. Մ. Զարիֆեան
Պէրպէրեան վարժարան

Սկիւտար

Հաճոյքով ստացանք Զեր 27 Հոկտ. թուակիր նամակը:

Վարժարանիդ մէջ սկառուտական գործը կազմակերպելու Զեր ջանքը մեզի համար գնահատելի է: Մեր կազմակերպութեան մաս կազմելու պայմանները Զեզի ծանօթ պէտք է ըլլան ըստ մեր ծրագիր-կանոնագրի, իսկ սկառուտական խմբային օրէնքի մասին մեր «Հայ Սկառուտ» օրկանին թիւ 17-18 էջ 287ին մէջ պաշտօնական յայտարարութեան համաձայն, Վարժարանիդ մէջ 5 խմբակ գոյութիւն ունենալով՝ դուք խմբակետի աստիճանով կը վարէք սոյն 5 խմբակները: Գալով վարչական գործերուն, տեղին մեր մասնաճիւղին հետ կը գործէք ըստ մեր ծրագրին:

Այս մասին գրած ենք Սկիւտարի մեր մասնաճիւղին, որ պէտք եղածը Զեզ հաղորդէ եւ ձեզի հետ գործակցի: Յարգանօք՝

ԿԱՐՈ

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՀՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՍԿԱՈՒՑՆԵՐ

ՀԻՄՆՈՒԱԾ

Կ. ՊՈԼԻՍ

1918

Թիւ 191

Սկիւտար, 29 Օգոստ. 1921

Մեծայարդ Տիար Մ. Զարիֆեան

Աստ

Մասնաճիւղիս սկառուտական Աւագ խմբակետ պ. Մ. Փախեանի հրաժարումովը նոյն պաշտօնը պիտի փափաքէինք Զեզ առաջարկել եւ պիտի խնդրէինք որ ընդփոյթ պատասխանէիք մեր գործեամբ մը:

Ընդունեցէք այս առթիւ մեր կանխայայտ շնորհակալիքը եւ յարգանաց հաւասարին:

Ի դիմաց Հ.Մ.Լ.Մ. Սկիւտարի մսճդ.ի վարչութեան Ամենադպիր
Փոխ ատենապետ
[Ստորագրութիւնները անընթեռնի - «Մ.»]

Եղբ. Վահէ Զոքկարեանի Պարգետացրումը՝ Հ.Մ.Լ.Մ.Ի «Արժանեաց» Ծբանշանով



Կառաջակա աւոր Հ.Մ.Լ.Մ.ական, Հայէպի մասնաճիւղի մասնաճիւղի 1950ական տարիներու ժողով ատենապետ եւ ատենապետ եղբ. Վահէ Զոքկարեանի պարգետատրումը՝ միութեան «Արժանեաց» շքանշանով, տեղի ունեցաւ 11 Մայիս 2006ին, Մաժտալիունի իր բնակարանին մէջ:

Այս առիթով, Մայտայի արդարաններէն Մաժտալիուն գիւղը այցելեց Հ.Մ.Լ.Մ.ի բազմանդամ պատուիրակութիւննը, որուն մաս կազմեցին Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Պատրիկ Կիւլպէնկեան, «Մարզիկ»ի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան, «Մարզիկ»ի վարչութեան անդամ եղբ. Արօ Մոսիկեան, ինչպէս նաև «Մարզիկ»ի 25ամեակի յանձնախումբի անդամ եղ-



«Մարզիկ»ի 25ամեակի յանձնախումբի անդամներ: Զախէն աջ՝ եղբ. Վահան Համամեան, քոյրեր Լուսին Գաղէզեան, Սիլվա Սաղըրեան, եղբայրներ Ռաֆֆի Կէօվօղլանեան և նազօ Հապիպեան:

Եղբ. Վահէ Զոքկարեան նկարուած՝ Հ.Մ.Լ.Մ.ի պատուիրակութեան հետ: Զախէն աջ՝ եղբայրներ Նազօ Հապիպեան, Արօ Մոսիկեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Վահէ Զոքկարեան, Գառնիկ Մկրտիչեան, Վիգէն Աւագեան և Վահան Համամեան: Լուսանկարմերը՝ «Աթիհօ ԱծնԱկ»ի

բայրներ՝ Նազօ Հապիպեան եւ Վահան Համամեան:

Պատուիրակութիւնը Մաժտալիունի մէջ արժանացաւ եղբ. Վահէ Զոքկարեանի հարազատներուն ջերմ ընդունելութեան:

Ընդունելութեան ընթացքին, Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան ներկայացուց եղբ. Վահէ Զոքկարեանը պարզեւատրելու Կեդրոնական Վարչութեան յայտարարութիւնը, զոր օրին՝ «Մարզիկ»ի 25ամեակի հանդիսութեան, 19 Մարտ 2006ին, պաշտօնապէս կատարուեցաւ «Յակոր Տէր Մելքոնեան» սրահի բեմէն: Եղբ. Մկրտիչեան ընթերցեց նաև Կեդրոնական Վարչութեան գնահատագիրը եղբ. Զոքկարեանին եւ ապա զայն պարզեւատրեց Հ.Մ.Լ.Մ.ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Պարզեւատրեալ եղբ. Վահէ Զոքկարեան իր կարգին չնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ երախտագիտութիւնը փոխանցեց Հ.Մ.Լ.Մ.ին, որ գիտէ պատուել վաստակաւորները, անոնք որոնք իրենց ժամանակէն, քրտինքէն ու քաղաքացին շատ բան տուած են միութեան՝ առանց որեւէ բան ակնկալելու անկէ:

Ընդունելութեան եւ պարզեւատրման պաշտօնական բաժինին յաջորդեց մտերմիկ զորյաց մը՝ Հ.Մ.Լ.Մ.ը յուզող օրւան հարցերուն շուրջ:



ԾԻՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ս. Ա.	
ՊԵՅՉՐՈՒԹ	

Աւստրալացի գիտնականներ վերջերս սկսած են երկրի ընտրանի մարզիկներուն Տիբեն. էյ. էյ. դործածել, մշակելու համար «ձեւուածպատրաստուած» մարզիկներ, որոնք Աւստրալիոյ վարկը պիտի պաշտպանեն մարզական միջազգային բեմերուն վրայ:

Օգտագործուած արհեստագիտութիւնը մասնագէտներուն առիթ պիտի տայ ծնողներուն ըսելու, թէ իրենց զաւակները իրենց ունեցած ծիներուն համաձայն՝ մարզական ո՞ր խաղերու մէջ կրնան լաւագոյն արդիւնքները արձանագրել եւ մօտիկ ապագային մէկական գերաստղեր դառնալ:

Միայն 20 միլիոն բնակիչ ունեցող Աւստրալիա իր «կշռ»էն շատ աւելի արդիւնաւէտեղած է տարիներու ընթացքին՝ մարզական աշխարհին մէջ:

Սակայն, կարգ մը մասնագէտներ գգուշացուցած են, թէ Աւստրալիա իր բեւ մարզական ազգ կրնայ ետ մնալ, եթէ

ծինային քննութիւններու չդիմէ:

Պետութեան կողմէ ֆինանսաւորուող Աւստրալիական Մարզական Հիմնարկը եւ Սիտնիի Ռոյըլ Փրինս Ալֆրէտի մոլեքիւլային եւ դարմանատնային ծինաբանութեան բաժանմունքին մասնագէտները արդէն իսկ գտած են մարզիկներուն ուժ եւ մզում տուող երկու ծիներ: Անոնք պիտի օգտագործուին՝ գտնելու համար ապագայ աստղեր եւ զանոնք մղելու համար դէպի իրենց խէչալ մարզական խաղերը, ըսած են հետազոտողներ:

Որոն թրէնթ, որ Ռոյըլ Փրինս Ալֆրէտի ծինային քննութիւններու բաժանմունքին տնօրէնն է, ըսած է, թէ «կարեւոր ծիներ գտնելու



պատճառներէն մէկը մարզումի աւելի լաւ ծրագիրներ ունենալն է կամ թերեւս մարզիկները մղելը դէպի յատուկ մարզանքներ, ուր անոնք յաջողութեան աւելի մեծ հաւանականութիւն ունին»:

Աւստրալիոյ Օրէնքներու Բարեկարգումի Յանձնախումբին ատենապետը՝ Տէյ-

լիս Ուխապրոթ, որուն յանձնախումբը ուսումնասիրած է հետազոտութեան օրինական եւ բարոյական հետեւանքները, ըսած է, թէ կ'ողջունէ նոր արհեստագիտութիւնը:

Ուխապրոթ յայտնած է, որ ծինային գիտութեանց եւ արհեստագիտութեան մէջ ար-

ձանագրուած յառաջդիմութիւնները գերաստղերու յառաջիկայ սերունդներուն վրայ իրենց ազգեցութիւնը պիտի ունենան:

Ճարտարագիտութիւնը օգտագործուած է աւելի արագ նաև եւ թենիսի աւելի լաւ ուսպէքներ ունենալու համար, հետեւաբար անիկա նաև մարզիկները կատարելագործելու համար լաւ ձեւ մընէ, ընդգծած է ան:





**ՍՊԻՏԱԿԱՄՈՐԹՆԵՐ
ԻՆՉՈՒՇ ՉԵՆ ԿՐՆԱԲ
ԵՐԿԱԲ ՏԵԽՈՂՈՒԹԵԱՄԲ
ՎԱԶԵԼ**

1988ին, ամերիկացի թըղթակից Ճիմի Մնայտըր յայտնած է, թէ սեւամորթ մարդկիներ պէտք է չնորհակալ ըլլան ստրուկներու սեփականատէրերու սերունդներուն՝ իրենց մարզական յաջողութիւններուն համար: Ան անշուշտ գործէ արձակւած է: Սակայն անոր արտայայտութիւնները որքան ալ տգիտութեան արդիւնք ըլլան, ներկայիս բազմաթիւ գիտնականներ կը հաւատան, որ ցեղերու միջեւ կան բնախօսական տարբերութիւններ եւ թէ՝ մորթին գոյնը ատոր հետ որեւէ կապ չունի:

Ճո՞ն էնթայն, իր «Թապու. ինչո՞ւ սեւամորթ մարդիկ-

ներ կը տիրապետեն մարդանքին եւ ինչո՞ւ մենք կը վախնանք այդ մասին խօսել:» գիրքին մէջ կը նշէ աւելի քան 200 գիտական ուսումնասիրութիւններ՝ կապւած ցեղերու միջեւ բնախօսական տարբերութիւններու:

«Այս նիւթը գիտութեան մէջ վիճելի չէ: Բանավէճը կը սկսի միայն, երբ հարցը կ'ընդհանրանայ, օրինակ, երբ կ'ըսուի՝ բոլոր սեւամորթերը այս կամ այն են, մինչդեռ հարցը ծինաբանութեան կը վերաբերի», ըսած է ան:

500 մեծը վազքի լաւագոյն ժամանակները արձանագրուած են մեծ մասամբ սեւամորթներու կողմէ. ճիշդ 493 մարդիկներ, որոնք ծագումով արեւմտեան ափրիկեցի են, մինչ արեւելեան Ափրիկէի կարգ մը երկիրներէն

մարդիկներ կը տիրապետեն երկար վազքի մրցումներու:

Քոփենհավայնի Մկանային Հետազոտութեանց կեղրունին մասնագէտներէն Պէնկթի Սոլթին գտնայի մարդկիները իրենց մկաններուն շուրջը եւ մէջը շատ աւելի արեան մազերակներ եւ ջերմուժ արտադրող մայրունտրիաներ ունին՝ քան սկանտինաւեան մարդիկներ: Անոնք ունին նաեւ դանդաղ կծկուող մկանային աւելի մեծ թիւով մանրաթելեր:

Քենիացի մարդիկները կը թուին «Հինուած ըլլալ» դանդաղօրէն ջերմուժ այրելու համար, երկար հեռաւուրութիւններու վրայ:

Մինչ եւրոպացիք կը թըլին տարբեր ուժեր ունենալ:

իոյ բնակիչները կը տիրապետեն ծանրաբարձութեան, մուլթ եւ գունդ նեսելու մրցումներուն:

«Անոնք ընդհանրապէս ունին աւելի կարճ թեւեր, ինչ որ կարեւոր է նման մարդական խաղերու, սակայն հոն չենք գտներ բազմաթիւ հոլանտացիներ, որոնք ընդհանրապէս հասակաւոր են», ըսած է ան:

Ծինային խմաստով օժտուած կամ ոչ, ժրաշան աշխատանքը յաջողութեան բանալին է:

«Ծիները կարելիութիւնները կը ճշգեն: Կան հարիւրաւոր մարդիկ, որոնք Մայքըլ Ճորտընի տաղանդը ունին, սակայն կայ միայն մէկ Մայքըլ Ճորտըն», դիմել տուած է Սոլթին:

(Օգտագործուած աղբիւրներ՝ «Ա.Ֆ.Փ», «Թոքը»)

With the compliments of

Restaurant Al-Mayass



Թղթակից
Պէտրոսի



Հ.Ա.Հ.Ա. Լիբանանի ըս-
կառատները, ինչպէս ամէն
տարի, այս տարի եւս,
Եղեռնի մէկուկէս միջիոն
նահատակներու կտակին

Հաւատարիմ մնալու իրենց ուխտը վե-
րանորոգեցին, խոնարհեցան անոնց ան-
մար յիշատակին առջեւ եւ խոստացան



ըլլալ արժանի յաջորդները Հայկական
Յեղասպանութեան զոհերուն եւ անկէ
վերապրած սերունդին:



Շաբաթ, 23 Ապրիլի երեկոյեան,
Հ.Ա.Հ.Ա. Պուրճ Համուափ, Պէլոութի,
Անթիլիասի, Ժրտէյտէի մասնաճիշե-
րու խմբապետական կազմերը եւ
Հ.Ա.Հ.Ա. չեփորախումբը, ներկայու-
թեամբ Հ.Ա.Հ.Ա. Լիբանանի Շրջանա-
յին Վարչութեան, Սկաուտ. Խորհուր-
դին եւ խմբապետութեան, իրենց մաս-
նակցութիւնը բերին Պիքֆայայի Ապ-
րիլեան Նահատակաց մատրան շուրջ
տեղի ունեցած հոգեհանգստեան պաշ-
տօնին, զոր մատուցեց Գրիգոր Ծ. Վրդ.
Զիթթձեան:

Հոգեհանգստէն ետք, ներկայ աւելի
քան 70 տարագաւորներուն իր պատգա-
մը փոխանցեց Զարեհեան զպրեվանքի
տեսուչ Գրիգոր Ծ. Վրդ. Զիթթձեան:

Ան իր խօսքին մէջ պարտք դրաւ իւրաքանչիւր հայու՝ հաւատարիմ ըլլալ իր ազգին, մշակոյթին, եկեղեցւոյ և հայկական արժեքներուն, որպէսզի իսկապէս անմահ մնան մեր նահատակները:

Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին խօսքը փոխանցեց քոյր իրմա Ճէրէճեան: Ան ըստ, թէ ինչպէս համայն հայութեան զաւակները, աշխարհի տարածքին, **Հ.Մ.Լ.Մ.ականները** եւս կը խոնարհին Եղեռնի 1.5 միլիոն նահատակներու անմոռանալի յիշատակին առջեւ եւ կը վերանորոգեն իրենց յանձնառութեան ուխտը՝ Հայ Դատին նկատմամբ: Քոյրը դիտել տուաւ, որ թէեւ 91 տարիներ անցած են ահաւոր ոճիրէն, թէեւ Յեղասպանութենէն ճողոպարած սերունդներու յաջորդները տակաւին կը շարունակեն ցիր ու ցան ապրիլ Սփիւռքի մէջ, սակայն տակաւին անոնք կառչած կը մնան իրենց պահանջներուն եւ իրաւունքներուն: «Պիտի մերժենք համակերպի Սփիւռքի պարտադրած պայմաններուն, եւ



մեր հաւաքական ու միասնական կամքով պիտի պայքարինք ձուլման բոլոր դաւերուն դէմ: Ամէն օր աւելի ու աւելի հայանալէն՝ հայօրէն գործելու եւ ազգօրէն զօրանալու պատրաստակամութենէն եւ յաղթանակելու անխախտելի երդումէն բացի ելք չկայ»:

տատեց քոյր Ճէրէճեան: Ան իր խօսքին աւարտին շեշտեց, որ հասած է պահը աւելի բարձր գոռալու եւ պահանջելու աշխարհէն՝ անտարբեր չմնալ 1.5 միլիոն նահատակներու արեան եւ Հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն նկատմամբ:



Travel Ways - Egypt

NILE CROCODILE CRUISES




*Incoming Tour Operator
Hotel & Cruise Reservation
Transportation
Excursions*

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1
from Makram Ebeid- Nasr City,Cairo,Egypt
Tel:02 2739400/500/600
www.travelways-egypt.com
marketing@twaysegyp.com



Ապա, Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի սկաուլտուրական անունով ծաղկեպսակներ զետեղուեցան Ապրիլի եան նահատակաց յուշակողին թողին առջեւ: Հ.Մ.Լ.Մ.ի շեփութական կատարողութեամբ հնչեց:

Շոփէնի մահերգը եւ իւրաքանչիւր տարագաւոր ծաղիկ մը զետեղեց յուշակողին տակ՝ ուխտելով հաւատարիմ մնալ նահատակներու սրբազան կտակին:

ԱՊՐԻԼ 24ԻՆ

Յաջորդ օր, 24 Ապրիլի առաւօտուն, Լիբանանի բոլոր մասնաճիւղերու տարագաւոր սկաուտները ներկայ գտնուեցան Անթիլասի մայրավանք, ուր Եղեռնի նահատակներու յիշատակին մատուցուած հոգեհանգիստէն ետք, խիտ ու խրոխս շարքերով մասնակցեցան լիբանանահայութեան պահանջամիրական քայլարշաւին:

Քայլարշաւը առաջնորդեցին Հ.Մ.Լ.Մ.ի եւ Հ.Բ.Լ.Մ.ի շեփորախումբերը: Սկաուտները հսկեցին կարգապահութեան եւ տպաւորիչ ներկայութիւն եղան քայլարշաւին ամբողջ տեսողութեան:

Քայլարշաւը, 50 հազար հայորդիներու մասնակցութեամբ, երկարեցաւ Անթիլասի Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտ, ուր տեղի ունեցաւ հանդիսաւոր ոգեկոչում՝ Եղեռնի 91ամեակի:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours
Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF
THE NEW AIRLINE COMPANY

Armavia
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand / Agence France Presse / Studio MICHET 2005-20031

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabetoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

Եղբ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԶԱՆՑԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՂՈՒՄ

ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Թղթակից
ՊԵՅՏՐՈՒԹ

Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝ եղբ. Յարութիւն Գազանճեանի (Յ. Գեղարդ) մահուան քառասունքին առիթով, Կիրակի, 23 Ապրիլ 2006ին, Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, Հոգեհանգստեան պաշտօն մատուցուեցաւ Պէյտրութի Ա. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ: Հոգեհանգստին ներկայ գտնուեցան Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայր Գառնիկ Մկրտիչեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Կարպիս Գապասագալեան, Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան, Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամներ, գրչեղբայրներ, հարազատներ եւ եղբօր յիշատակը յարգողներ:

Հոգեհանգստէն ետք, ներկաները ուղղուեցան Հ.Մ.Լ.Մ.ի Պէյտրութի ակումբը, ուր տեղի ունեցաւ յիշատակի հանդիպում:

Հանդիպումին, Հ.Մ.Լ.Մ.ի ընտանիքին կողմէ խօսք առաւ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ



Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան խօսքի պահուն:

Քէշիշեան: Ան սկաց Հ.Մ.Լ.Մ.ի մէծ կորուստը եւ եղբ. Գազանճեանի արժանիքներուն անդրադառնալով յայտնեց, որ իր մահով հայութիւնը կորսնցուց տիպար ազգային մը, հաւատաւոր գաղափարական մը, գրականութեան մշակ մը եւ վաստակաշատ Հ.Մ.Լ.Մ.ական մը:

Եղբ. Քէշիշեան իր խօսքին մէջ ներկայացուց եղբ. Գազանճեանի Հ.Մ.Լ.Մ.ականի հարուստ անցեալը եւ շեշտեց, որ եղբօր կարեւոր իրագործումներէն է Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտութեան ծանօթացումը Համաշխարհային Սկաուտական Շարժումին մօտ եւ անոր իբրեւ արդիւնք՝ Հ.Մ.Լ.Մ.ի անդամակցութիւնը Շարժումին, իբրեւ Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն (Հ.Ա.Ս.Կ.):

Խօսքին աւարտին, եղբ. Քէշիշեան Հ.Մ.Լ.Մ.ի վշտակցութիւնները յայտնեց «հեզ, համեստ, բայց միշտ մեծ մնացած» եղբօր ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն:

Հանդիպումը աւարտեցաւ Հոգեհանգստ:





«ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՊԵՅՉՐՈՒԹԻ Ա. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵԶ

**Թղթակից
ՊԵՅՉՐՈՒԹ**

Lիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանի հովանաւորութեամբ եւ Հ.Մ.Հ.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ու Խըմբապետութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 26 Փետրուար 2006ին, Պէյշութի Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ «Հայ Սկառուտի Օր»ուան տօնակատարութիւն, որուն ընթացքին սկառուտներ վերանորոգեցին իրենց խոստումը:

Տօնակատարութեան ներկայ եղան Հ.Մ.Հ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան, Հ.Մ.Հ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան, Շրջանային Վարչութեան անդամ քոյր Լուսին Գապէզեան, Հ.Մ.Հ.Մ.ի Շրջանային Սկառուտ. Խորհուրդը, Հ.Մ.Հ.Մ.ի մասնաճիւղերու վարչութիւններու անդամները եւ խմբապետական կազմերը:

Երգման եւ խոստման վերանորոգման արարողութենէն առաջնորդութեամբ Հին Ջուղայի հայկական գերեզմանատան խաչքարերու քանդումին դէմ իրեն բողոքի արտայայտութիւն, 340 սկառուտներ մասնակցեցան Հ.Յ.Դ. ԼեՄի նախաձեռնած ստորագրահաւաքին:

ԵՐԵՅ-ՊԱՐՄԱՆՈՒՀԻ ՃԻԼԵՐՈՒ ՄԻԶ-ՄԱՍՆԱԳԻՂԱՅԻՆ ՌԵԼԻ-ՓԷՅՉՐԸ

**Թղթակից
ՊԵՅՉՐՈՒԹ**

Հ.Մ.Հ.Մ.ի Լիբանանի Շրջանային մբապետութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 30 Ապրիլ 2006ին, տեղի ունեցաւ երէց-պարմանուհի ճիւղի միջ-մասնաճիւղային ուղիղ-փեյլը:

Կիրակի, առաւօտեան ժամը 9ին, Հ.Մ.Հ.Մ.ի Պէյշութի, Պուրճ Համուտի, Անթիլիսաի, Ժատէյտի մասնաճիւղերու երէց - պարմանուհի փաղանգներէն 51 քոյրեր եւ եղբայրներ, ինչպէս նաև Շրջանային երէց ճիւղի խմբապետ եղբ. Կարէն Աբրահամեան ներկայ էին Հ.Մ.Հ.Մ.ի Պէյշութի ակումբը:

Քոյրերն ու եղբայրները բաժնուեցան 7 տասնեակներու:

Ապա, անոնք ուղղուեցան եկեղեցի, ուր Առաջնորդ Մրբացնը փոխանցեց իր պատգամը: Ան իր պատգամին մէջ յայտնեց, թէ «Հայ Սկառուտի Օր»ը սկառուտական կեանքին մէջ կարեւոր իրադարձութիւն մընէ: Հ.Մ.Հ.Մ.ի պատասխանատուները յարմար նկատած են զայն տօնել Վարդանանց տօնին հետ, որովհետեւ Վարդանանքը եւ Հ.Մ.Հ.Մ.ը մեր կեանքին կը ներկայանան իրեւ ազգային արժէքներ:

Առաջնորդը նկատել տուալ որ 1918էն ետք հայկական բանակին տեղը ստանձնեց Հ.Մ.Հ.Մ.ը, որ ուխտեց նույիրուիլ, զոհուիլ եւ պայքարիլ հայ ժողովուրդի ազատութեան եւ յաւերդութեան համար: «Մենք ձեր մէջ կը տեսնենք հայ ժողովուրդին բանակը, որ ի գին ամեն զոհողութեան պատրաստ է յառաջանալու եւ միշտ պատնէշի վրայ մնալու», ըստ Գեղամ Եպս. Խաչերեան:

Առաջնորդ Մրբազնին պատգամէն ետք տեղի ունեցաւ երգման եւ խոստման վերանորոգման արարողութենէն, որմէ ետք աստիճանաւորական կազմերը եւ պատասխանատուները ուղղուեցան Առաջնորդարանի դահլիճ՝ Առաջնորդ Մրբազնին հետ հանդիպում մը ունենալու համար: Հանդիպման ընթացքին, Մրբազնին յանձնուեցաւ սկառուտին պատիւը խորհրդանշող սկառուտական փողկապը: Գեղամ Եպս. աչերեան գարձեալ խրատական խօսքեր փոխանցեց ներկաներուն եւ անոնցմէ իւրաքանչիւրին նույիրեց եկեղեցական գիտելիքներու գրգոյկ մը:



Տասնեակները անցան 10 հանգրուաններէ՝ Պէյշութի, Պուրճ Համուտի, Ժատէյտի, Անթիլիսաի, Ժալբայի շրջաններէն եւ ի վերջոյ հասան Անթիլիսա՝ «Աղբալեան- Հ.Մ.Հ.Մ.» մարզամշակութային համալիր:

Ուելի փեյփըրին առաջին հանդիսացաւ «Դաւիթ Բէկ» տասնեակը:

Մրցումի աւարտին քոյրերն ու եղբայրները ունեցան մտերմիկ պահ մը, միասնաբար պատրաստեցին խորովածը ու ճաշեցին ընկերային բարձր միջնուրուտի մէջ:

Յայտագիրի աւարտին, իւրաքանչիւր մասնակցողի փոխանցուեցաւ յուշանուէր մը:




ԱՐԻ-ԱՐԵՆՈՅԾԸ ճԻՒՂԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ ԵՒ...

**Թղթակից
ՊԷՅՐՈՒԹ**

Միառաւտական շարքերու կազմակերպման եւ վերաբրակաւորման նախանձախնդրութեամբ, Շաբաթ, 29 Ապրիլ 2006ին, Հ.Մ.Լ.Մ.-ի Այնձարի ակումբին մէջ տեղի ունեցաւ Լիբանանի Շրջանային Խմբապետութեան կազմակերպած միջ-մասնաձիւղային արի-արենոյշ ճիւղերու խմբապետական դաստիարակչական սեմինարը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Լ.Մ.-ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի, Ժըտէյտի եւ Այնձարի մասնաձիւղերէն 27 պատասխանատուներ, գլխաւորութեամբ՝ արի ճիւղի խմբապետ եղը. Վահէ Պօղոսեանի եւ արենոյշ ճիւղի խմբապետուհի քոյր Վարդուկ Ֆըռնըզեանի:

Սեմինարին նիւթերը փոխանցուեցան դասախոսութիւններու, զրոյցներու եւ խաղերու միջոցով:



Առաջին նիւթն էր հոգեբանական՝ «Պատահի-պատասխանատու յարաբերութիւնը տարբեր տարիքներու»: Նիւթը ներկայացուց քոյր Սիլվա Քիւրքճեան: Ան անդրադարձաւ պատանիներու մտային, ֆիզիքական եւ անհատական կազմութեան, ինչպէս նաև՝ պատանիներու եւ պատասխանատուներու յարաբերութեան եղանակին: Պատասխանատուները տեղին ներկայացուցին իրենց դժուարութիւնները եւ ստացան անհրաժեշտ ցուցմունքներ:

Առաջին դասախոսութեան ետք, պատասխանատուները բաժնուեցան երկու խմբակի եւ կատարեցին կանչերու մրցում:

Սեմինարին երկրորդ նիւթն էր՝ «Սկառուտութիւնը եւ անօր դիմագրաւած դժուարութիւններն ու մտահոգութիւնները»: Նիւթը զրոյցի ճամբով ներկայացուց Շրջանային խմբապետուհի քոյր Սեղա Պէշեան: Պատասխանատուներուն մօս հաճելի եւ հետաքրքրական էր զրոյցի բաժինը, երբ իւրաքանչիւր անդամ ընտրեց իրեն վիճակուած նիւթը եւ մնացեալ պատասխանատուներուն հետ արծարծեց զայն: Շրջանային Սկառուտ. Խորհուրդի անդամ եղը. Ներսէն Լրպարեան ներկայացուց սկառուտական նուիրապետական կարգերը, ապա առիթ ընծայեց պատասխանատուներուն, որպէսզի ներկայացնեն իրենց հարցումները:

Շրջանային արի-արենոյշ ճիւղերու խմբապետն ու խմբապետուհին պատրաստած էին խաղ մը, որուն հարցումները առնչուած էին սկառուտական ներքին ծրագիր-կանոնագիրին:

Պատասխանատուները բաժնուեցան երկու խմբակի եւ խաղացին: Այսպէսով, անոնք կարողացան վերլիշել ու սորվիլ սկառուտական ներքին ծրագիր-կանոնագիրին յօդուածները:

Դասախոսութիւններէն ետք, սեմինարին մասնակիցները պատրաստեցին խորոված եւ անցուցին մտերմիկ պահ մը:



...ՄԻԶ-ՄԱՍՆԱԿԻԼԱՅԻՆ ԽԱՂԻ ՕՐԸ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

Կիրակի, 30 Ապրիլ 2006ին, տեղի ունեցած արի եւ արենոյշ ճիւղերու միջմասնաճիւղային խաղի օրը: Օրուան նպատակն էր իրարու ծանօթացնել մասնաճիւղերու արիներն ու արենոյշները եւ անոնց մէջ զարգացնել ընդհանուր տեղեկութիւններու եւ սկառատական գիտելիքներու պաշարը:

Հ.Մ.Լ.Մ.ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի, Ժըտէտէի եւ Այնձարի մասնաճիւղերէն 158 արիներ եւ արենոյշներ բաժնուեցան 15 խմբակներու: Անոնք արշաւելով այցելեցին Այնձարի զանազան վայրերը, ստացան իրենց հարցարանը, լուծեցին ու ապա չարունակելով՝ անցան յաջորդ հանգըր-



ւան: Հարցարանը լուծող խմբակին արուեցաւ բանալի մը: Կէսօրուան ճաշէն ու դադարէն ետք, անոնք չարունակեցին խաղով:

Առաւատեան ժամը 11:54 մինչեւ երեկոյեան ժամը 5 սկառատները խանդավառութեամբ խճողեցին Այնձարի փողոցները:

Տեղի ունեցաւ մրցանակաբաշխութիւն, որուն ընթացքին առաջին հանդիսացող «Թութակ» խմբակին անդամները ստացան կարմիր Խաչի յատուկ պայուսակներ՝ իբրեւ նույնը:

Օրուան յայտագիրին աւարտին, սեմինարին մասնակցող պատասխանատուններուն փոխանցուեցան սեմինարին մասնակցութեան հաստատագիրներ:

Երեկոյեան, բոլորը ակումբ վերադարձան խանդավառ տրամադրութիւններով՝ սպասելով ընկերային յաջորդ ձեռնարկը:

■ Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.

■ 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.

■ Individualized and personal service, 24 hour reception and room service

■ Bar

*Feel at home,
away from home...*

Yerevan

32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

Reservations

www.europehotel.am

StudioKREN 2005 AGS



Հ.Ա.Հ.Մ.Ի ԼՈՍ ԱՆԴԵԼԸԻ ՄԱՍՆԱԿԻՂԸ ՏՕՆԱՄԲԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅՇՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

**ԵՂԲ. ՍԱՄՈՒԻԼ ՄԿՐՏԻՉԵԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՒ ԼՈՍ ԱՆՃԵԼԸԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ՄԱՍՆԱԿԻՂԸ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԶՈՅԴ ԳՆԱՀԱՏԱԳԻՐՆԵՐՈՒՆ**

Մարտ Քէշիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼԸ

Աւելի քան 300 Հ.Ա.Հ.Մ.ականներու, համակիրներու, նույիրատուներու եւ ծնողներու ներկայութեամբ, Հ.Ա.Հ.Մ.ի Լոս Անճելսի մասնաճիւղը Փասատինայի Հայ Կեդրոնին մէջ նշեց իր հիմնադրութեան ՅՇՐԴ տարեդարձը:

Տօնախմբութեան ներկայ եղան Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր տաճարի հոգեւոր հովիտ՝ Նարեկ Ա. Քհնյ. Փէջլիվանեան, Հ.Ա.Հ.Մ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մէկր Դաւիթեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Ռաֆֆի Խոբէնճեան, մասնաճիւղի մօտ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վարդգէս Շխրամեան, Շրջանային Ընդհանուր Խմբապետ եղբ. Հրայր Պոյաճեան եւ բազմաթիւ քոյլ մասնաճիւղերու ներկայացուցիչներ:

Մասնաճիւղին վարչութեան անունով ներկաները ողջունեց ատենապետ եղբ. Փիէր Մանուկեան: Ան հպանցիկ ակնարկ մը նետելով Հ.Ա.Հ.Մ.ի ստեղծման եւ նպատակներուն վրայ, վստահեցուց, որ Լոս Անճելսի մասնաճիւղը կը խոնարհի Հ.Ա.Հ.Մ.Մ.ի հիմնադրիներու իշտատակին առջեւ եւ կը խոստանայ շարունակել այս մեծ կազմակերպութեան առաքելութիւնը՝ պատրաստերու համար վաղուան տիպար քաղաքացին եւ ազգային նկարագիրի տէր հայր:

Եղայրը չնորհակալութիւն յայտնեց ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին եւ բոլոր այն անհատներուն, հաստատութիւններուն եւ հովանաւորներուն, որոնք նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կը կանգնին մասնաճիւղին վերելին ու բարգաւաճման:

Ապա, տեղի ունեցաւ օրուան անակընկալլը: Մասնաճիւղին ատենապետը, դիւա-

նի անդամներ՝ քոյլեր Դանիա Թաշճեանի եւ Անի Հինաոյեանի ընկերակցութեամբ, բեմ հրաւիրեց վաստակաշատ Հ.Ա.Հ.Մ.ական եղբ. Սամուէլ Մկրտիչեանը, ներկայացուց Հ.Ա.Հ.Մ.ականի անոր հարուսա կեանքը, ընդգծեց միութենական անբասիր ոգին եւ կեցուածքը, ըսերլով «Հ.Ա.Հ.Մ.ի տարեց սերունդի շահակիրներէն է եղբ. Սամուէլ Մկրտիչեանը, որ հոգիով միշտ երիտասարդ կը մնայ: Ան միշտ մտահոգ է ապագայ մեր սերունդներով, որոնց դաստիարակութեամբ յանախ կը զբաղի եւ կը քաջալերէ զանոնք, որպէսզի ըլլան հաւատաւոր Հ.Ա.Հ.Մ.ականներ եւ հայ ազգին խոնարի ծառանելր:

Այսուհետեւ, վարչութեան անունով եղբ. ատենապետը եղբ. Սամուէլ Մկրտիչեանին յանձնեց յուշանուէլ մը, առ ի գնահատանք մասնաճիւղէն ներս երիտասարդութիւնը ոգեւորելու օգտաշատ աշխատանքին ու նույիրումին համար:

Անակնկալի եկած, մէծարեալ եղբայրը ընդունելէ ետք յուշանուէլը, Հ.Ա.Հ.Մ.ականի գիտակից հաստատակամութեամբ արտասանեց մէկ նախադասութիւն. «Հ.Ա.Հ.Մ.ական ծնած եմ եւ Հ.Ա.Հ.Մ.ական պիտի մեռնիմ»:

Ներկաները յոտնկայս եւ երկարաշունչ ծափողճոյններով ընդունեցին եղբ. Մկրտիչեանի գնահատանքը, որուն արժանի է ան, իբրեւ միութենական 73 տարուան վաստակ ունեցող եղբայր, նախկին ֆութպոլիստ, իրաւարար, վարչական, հրապարակագիր եւ Հ.Ա.Հ.Մ.ի նույիրուած աւելի քան 200 յօդուածներու հեղինակ:

Առաջին անակնկալին յաջորդեց երկրորդ մը, երբ Լոս Անճելսի քաղաքապետութեան ներկայացուցիչը գնահատագիրով մը պատուեց եղբ. Մկրտիչեանը՝ Լոս Անճելս քաղաքը «ապրելու աւելի լաւ տեղ մը դարձնող» իր հանրանուէր ծառայութիւններուն համար:

Օրուան պատգամը փոխանցեց Շրջա-



Լոս Անճելսի քաղաքապետութիւն եղանակութեան եղբ. Սամուէլ Մկրտիչեանին շնորհուած գնահատագիրը:



նային Վարչութեան ատենապետ եղը. Ռաֆֆի Խոբէնճեան: Ան չնորհաւորեց մասնաճիւղին տարեդարձը եւ չնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք կը զօրակցին մասնաճիւղին: «Հ.Մ.Լ.Մ.ի Լոս Անենլըսի մասնաճիւղը ծնունդ տալով այլ մասնաճիւղերու՝ շրջանի Հ.Մ.Լ.Մ.ի մայրը դարձած է: Ան Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու սիրտն է եւ վստահ ենք, որ մասնաճիւղը պիտի շարունակէ մնալ միշտ կայտառ ու ոգեւորիչ, բարի օրինակ դառնալով իր շրջապատին», ընդգծեց եղայրը:

Երեկոյին պաշտօնական յայտագիրը վերջ գտաւ Նարեկ Ա. Քչնյ. Փէջլիվանեանի հայրական օրհնութիւններով եւ սեղաններու օրհնութեամբ:

Ընթրիքէն ետք, ներկաները ժողովրդային երգերով պարի հանեց հիւր երգիչ Անթուան Պէղճեան, որմէ ետք բեմը յանձնուեցաւ ազգային-յեղափոխական երգերու մեկնարան Գառնիկ Սարգիսեանին եւ իր «Քնար» նուագախումբին, որոնք աննկարագրելի ուրախ մթնոլորտ մը ստեղծեցին սրահէն ներս: Ծանօթ երգիչին շուրջ համախմբուած երիտասարդ-երիտասարդուհիները մեծ ոգեւորութեամբ ընկերակցեցան բոլոր երգերուն: Անոնք խանդակառութեամբ երգեցին Պանք Օթոմանի, Խանասորի արշաւանքին, Կիկոյին, Ռուբէնին, Գէորգ Զաւուչին, Թէհլիրեանին, Աբոյին, Արաբոյին, Թաթուլ Կրպէյեանին, Լիպպոնի Հինգին, Աղբեկը Սերոբին, Պետրոս Սէրէմեանին, հին ու նոր ֆետայիներու եւ պատմական կարեւոր դրուագներու նուիրուած երգերը, իւրաքանչիւրին պատմականը դրուշմելով իրենց հութեան մէջ: Երեկոն վերածեցաւ երգահանդէսի եւ իւրաքանչիւր երգ եղաւ մեր պատմութիւնը յաւերժացնող դաստիարակչական դասընթացը մը:

Մթնոլորտէն խանդակառուած՝ եղան սրտաբուխ նուիրատը ուրութիւններ: Ուրախ մթնոլորտ շարունակուեցաւ մինչեւ առաւօտեան փոքր ժամերը: Ներկաները ազգային շունչով կազդուրուած՝ մեկնեցան տուն, իրենց հետ տանելով մեր պատմութեան հարուստ անցեալը:



Sarkis
or
Paul

SASSOUNIAN INC.

Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220
(213) 627-1206
Outside Ca: 1-800-544-4419
Fax: (213) 623-6981

www.sassouniantools.com E-mail: info@sassouniantools.com



«ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ԳՎՄԻՇԼԻԻ...

**Թղթակից
ԳԱՄԻՇԼԻ**

5 Մարտ 2006ին, Հ.Մ.-Լ.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղին Սկառուտորհութեամբն նախաձեռնութեամբ, խմբապետական եւ աստիճանաւորական կազմերուն ջանքերով, շրջանի «Կիւլպէնկեան» սրահին մէջ նշուեցաւ «Հայ Սկառուտի Օր»ը:

Տօնակատարութեան ներկայգութեան ժամանութեան դական Փոխանորդ Մասիս Վորդ. Զոպուեան, Յակոբ Քչնյ. Մելքոնեան, Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ատենապետ ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան, Շրջանային ըլլկառուտ.

Խորհուրդի ներկայացուցիչ եղբ. Արմէն Քէօշկէրեան, Շրջանային Խմբապետ եղբ. Լեւոն Իսկէնտէրեան, Երէց Հ.Մ.Լ.Մ.ականներ, ազգային պատկան մարմիններու ներկայացուցիչներ եւ համակիրներու հոծքազմութիւնը:



Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան կը փոխանցէ օրուան պատգամը:

Տօնակատարութիւնը բացուած յայտարարուեցաւ մէկ վայրկեան յոտնկայս լոռութեամբ՝ յարգելու համար յիշատակը մահացած Հ.Մ.Լ.Մ.ականներու: Ապա, շեփորախումբը նուագեց Սուրիոյ, Հայաստանի քայլերգները: Բացման խօսքը արտասանեց Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Գէորգ Պալեան: Ան անդրադարձաւ Հ.Մ.Լ.Մ.ի նշանաբանին, որ իր մէջ խտացուցած է հայ մարդու կեանքին իմաստը, նաեւ՝ նորահաս սկառուտին մարմնակրթութիւնը, ազգային դաստիարակութիւնը, մարդկային արժէքներու փոխանցումը եւ բարոյական չափանիշներու շեշտումը:

Բացման խօսքէն ետք, խումբ մը արի-արենոյշներ ներկայացուցին բուրգեր: Այնուհետև, քոյրեւա Մանուկեան մէներգեց «Հայոց մայրեր» երգը, երգեհոնի ընկերակցութեամբ՝ եղբ. Քրիստ



Սկառուտական երգչախումբը ելոյթի պահուն:



Միքայէլեանի: Դադարի ընթացքին, Սկառուտ. Խորհուրդի ատենապրուհի քոյր Մարալ Կէնճոյեան կարդաց Շրջանային Սկառուտ. Խորհուրդին այս առիթով յղած չնորհաւորագիրու:

Օրուան պատգամը փոխանցեց Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան: Եղայրը ողջունեց մասնաճիւղին վարչութիւնը, աղդային պատկան մարմիններու ներկայացուցիչներն ու համակիրները: Ան իր պատգամին մէջ յայտնեց, թէ «Հայ Սկառուտի Օր»ը սկառուտական կեանքին եւ գործին մէջ կարեւոր իրադարձութիւն մըն է: Հ.Մ.Լ.Մ.ի պատասխանատուները յարմար նկատած են զայն նշել Վարդանանց տօնին հետ, որովհետեւ Վարդանանքը եւ Հ.Մ.Լ.Մ.ը մէր կեանքին մէջ կը ներկայանան իրեւ ազգային արժէքներ:

Եղայրը նշեց, որ 1918էն ետք հայկական բանակին տեղը ստանձնեց Հ.Մ.Լ.Մ.ը, որ ուխտեց նուիրուիլ, զոհուիլ եւ պայքարիլ հայ ժողովուրդի ազատութեան եւ յաւերժութեան համար: «Մենք ձեր մէջ կը տեսնենք հայ ժողովուրդին բանկը, որ ի գին ամեն զոհողութեան պատրաստ է յառաջանալու եւ միշտ պատճեշի վրայ մնալու», շեշտեց ան, աւելցնելով, որ այս ուխտը սակայն պէտք է նուիրագործուի գործով, կեանքով եւ օրինակով:

Օրուան պատգամէն ետք, խումբ մը արի-արենոյշներ ներկայացուցին զաւեշտ մը:

Գեղարուեստական յայտագիրով, եղբ. Աւո Յովսէփեան

ասմունքեց Յովհաննէս Շիրազի «Հայ ժողովուրդի երգը»: Ապա, սկառուտական երգչախումբը հանդէս եկաւ ազգային եւ յեղափոխական շարք մը երգերով:

Տօնակատարութեան աւարտին բեմ հրաւիրուեցաւ եղբ. Կապի Տիգիծեան՝ փոխ խմբապետի աստիճանատուչութիւնը կատարելու եղբ. Կարէն Ղազարեանին: Ապա, խմբապետը բեմ հրաւիրեց Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ատենապետն ու Շրջանային խմբապետը կատարելու երգման արարողութիւն եւ աստիճանատուչութիւն: Բեմ հրաւիրուեցաւ նաեւ Առաջնորդական Փոխանորդը:

Եղբ. Կապի Տիգիծեան կատարեց սկառուտական խոստումը եւ եղունք հաւատարիմ մնալ Հ.Մ.Լ.Մ.ի ծրագիր-կանոնագիրին՝ ծառայելու ազգին ու հայրենիքին եւ պայքարելու այլակրման ու ապազգայնացման դէմ:

Երգուեալ եղայրը արժանացաւ կանաչ փողկապի:

Շրջանային խմբապետը այս առիթով չնորհաւորեց մասնաճիւղին Սկառուտ. Խորհուրդը, խմբապետական եւ աստիճանաւորական կազմերը, անոնց մաղթելով աննկուն կամք եւ լաւագոյնին ձգտելու ողի:

Հուսկ, խօսք առաւ Առաջնորդական Փոխանորդ Մասիս Վրդ. Զոպուեան, որ կոչ ուղեց ամուր կառչած մնալու Հ.Մ.Լ.Մ.ի սկառուտական գաղափարներուն:

Տօնակատարութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ «Պահպանիչ»ով:

TOGETHER WE ARE STRONGER ՄԻԱՍԻՆ ԱՒԵԼԻ ԶՈՐԱՒՐ ԵՆՔ

ԱՖՀԻԼ AFHIL
Armenian Mutual Fund
Tel. / Fax: 01 242556 - 242557

...ՔԵՍԱՊԻ

Դալար Թուրիկեան ՔԵՍԱՊԻ

**Հ.Ը.Ը.Ը.ի մեծ ընտանիքի
բոլոր մասնաճիւղերուն
նման, Քեսապի մասնաճիւ-
ղը եւս իր արժանի յարգան-
քը մատուցեց հայ սկառ-
տութեան, երբ 5 Մարտ 2006ին կազմա-
կերպեց «Հայ Սկառտափ Օր»ուան տօ-
նակատարութիւն, շրջանի «Սարդարա-
պատ» սրահին մէջ: Տօնակատարու-
թեան ներկայ եղան Հ.Ը.Ը.Ը.ի Շրջա-
նային Սկառտա. Խորհուրդէն անդամներ
եւ քեսապահայ հոծ բազմութիւն մը:**

Զեւնարկին բացման խօսքը արտա-
սանեց մասնաճիւղի խմբապետուհի
քոյր Դալար Թուրիկեան: Ան Հ.Ը.Ը.-
Ը.ի էութեան եւ նպատակին անդրա-
դառնալով ըստա. «Հարկ է յիշել եւ յիշատակը անթառան
պահել այն հիմնադիր եղբայրներուն, որոնք հայ կեանքի
ամենեն դժուար օրերուն հաւաքած ու դաստիարակած են
երիտասարդ սերունդը՝ վառ պահելու համար կեանքը
Հ.Ը.Ը.Ը.ի մեծ ընտանիքեն ներսու»:

Տօնակատարութեան ընթացքին գործադրուեցաւ գեղար-
ւեստական կոկիկ յայտագիր: Սկառտաները հանդէս եկան եր-
գով, ասմունքով եւ պարով:

Գեղարւեստական յայտագիրին սկիզբը նույիրուած էր



Փետրուարեան ապստամբութեան 85ամեակին: Սկառտաները
կենդանի պատկերով մը ներկայացուցին ապստամբութիւնը,
որմէ ետք տեղի ունեցաւ չափական մարզանք, ասմունք եւ
հայկական պար: Յայտագիրի աւարտին, խումբ մը քաջա-
սիրտ արիներ ներկայացուցին բուրգեր:

Տօնակատարութեան աւարտին տեղի ունեցաւ նորագիրի
վկայականաց բաշխում: Ապա, խումբ մը քոյրեր եւ եղբայր-
ներ ստացան Վարիչ Առաջնորդի աստիճան: Քոյր Դալար
Թուրիկեան ստացաւ խմբապետի աստիճան:

Սուրբից Շրջանային Սկառտա. Խոր-
հուրդին խօսքը փոխանցեց քոյր Լիզա
Լալիկեան: Ան իր խօսքին մէջ նշեց Հ.-
Ը.Ը.Ը.ի կարեւորութիւնը եւ սկառ-
տական շարքերու անհրաժեշտու-
թիւնը՝ հայապահպանման գործին
մէջ:

Տօնակատարութեան փակման
խօսքը կատարեց Եղիշէ Քչնյ. Սարգիս-
եան: Ան ըստա. «Մեր օրերուն անհա-
րազատ սովորութիւններով եւ մշա-
կոյրներով շրջապատուած եւ աննեց
ազդեցութեան սպառնալիքին դեմ
կանգնողը եւ հայութեան հարազատ
դիմագիծին պաշտպանը Հ.Ը.Ը.Ը.ն է:
Հ.Ը.Ը.Ը.ի մէջ է որ մեր զաւակները
կը բրծուին ազգային շունչով եւ ոփիով»:

Տօնակատարութիւնը փակուեցաւ
«Պահպանիչ»ով:





... ԵՒ ՏԵՐ ԶՈՐԻ ՄԵԶ

Արմէն Քէօշկէրեան ՏԵՐ ԶՈՐ

1 7 Մարտ 2006ին, Տէր Զօրի Ս. Նահատակաց եկեղեցւոյ ներքնասրացին մէջ պաշտօնապէս նշուեցաւ «Հայ Սկառուտի Օր»ը, ներկայութեամբ Հայկազ Քնչնյ. Մասոյեանի, Հ.Մ.Լ.Մ.-ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Պալէզոգեանի, Սուրբիոյ Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեանի, Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ան-

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԴԱՐՁԱԾ ԵՐԱՋԸ. ՏԵՐ ԶՈՐԻ ՍԿԱՌԱԿԱՎՆ ԿՈՐԻՉԸ

Հ.Մ.Լ.Մ.-ի Տէր Զօրի սկառուտական կորիկով ունի աւելի քան մէկ տարուան պատմութիւն: Սուրբիոյ Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ եւ Շրջանային Սկառուտ. Խորհուրդին կազմակերպութեամբ, Փետրուար 2005ին ի վեր, 15 օրը անգամ մը Հալէպէն Տէր Զօր կը գործուղին երկու խմբապետներ՝ եղբայրներ Արիկ Խաչոյեան եւ Մանօ Միլահեան, որոնք կազմակերպական աշխատանք կը կատարեն տեղույն 25-30 գայլիկ-արծուիկներուն եւ արի-արենոյշներուն հետ:

Կորիկին պատախանատուն է շրջանէն քոյր Լիկա Վարդանեան, օգնական ունենալով եղբայր Յակոբ Մուրաֆեանը, քոյրեր Անժելա Վարդանեանն ու Ալին Մուրաֆեանը: Կորիկին անդամները իրենց աշխատանքները կը կատարեն Տէր Զօրի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ, ուր կը սորվին կակուդ թաթիկի եւ նորագիրի գիտելիքներ, ազգային երգեր եւ կանչեր: Անոնք պարբերաբար Հալէպէն կը ստանան երգարաններ, զանազան առիթներով պատրաստուած արիքըններ եւ «Մարզիկ» ամսաթերթի 10 օրինակ:

Կորիկին անդամները յաճախ կ'այցելեն եկեղեցի եւ կ'ունկնդրեն քահանայ հօր քարոզը: Անոնք կը կատարեն պտոյտներ, դաշտային խաղեր, նախաճաշ եւ հաւաքոյթ՝ Բարեկենդանի ու Նոր Տարուան առիթով:

Կորիկը կը վայելէ Ս. Նահատակաց եկեղեցւոյ թաղականութեան նիւթաբարոյական օժանդակութիւնը:



Հ.Մ.Լ.Մ.-ի Տէր Զօրի սկառուտական կորիկի անդամներ:

դամ եղբ. Արմէն Քէօշկէրեանի եւ 80 հայորդիներու:

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ զոյտ քայլերգներով: Բացման խօսքով հանդէս եկաւ եղբ. Աբիկ Խաչոյեան, որ բեմ հարակիրեց քոյր Լիկա Վարդանեանը՝ ներկայացնելու Տէր Զօրի սկառուտական կորիկին տարեկան տեղեկագիրը:

Տեղեկագիրին մէջ ուրախութեամբ կը յիշուէր 2005ի Ապրիլ 24ին, տեղւոյն գայլիկ-արծուիկներուն ընդունելութիւնը՝ Արամ Ա. Վեհափառին, Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանին եւ Ազգային իշխանութեան անդամներուն: Կը յիշուէր նաեւ, որ 2 Նոյեմբեր 2005ին, տեղւոյն սկառուտները ընդունած են Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը, Լիքանանի, Յորդանանի, Պաղտատի, Մուսուլի եւ Քուէյթի մասնաճիւղերու ներկայացուցիչները եւ Սուրբիոյ Շրջանային Վարչութիւնը՝ Հ.Մ.Լ.Մ.-ի կողմէ Եղեռնի 90ամեակին նուիրուած յուշաքարին զետեղման առթիւ:

Տեղեկագիրի ներկայացումէն ետք կիրարկուեցաւ գեղարւեստական յայտագիրը: Յաջորդեց խոստման արարողութիւն: Քոյր Լիկա Վարդանեան նորագիրի եւ Նորընծայի վկայական-



ներ յանձնեց: Երեք քոյլեր եւ եղբայր մը Փոխ Առաջնորդի աստիճան ստացան:

Շրջանային Սկաուտ. Խորհուրդի խօսքը փոխանցեց եղբ. Արմէն Քէօշկէրեան: Եղբայրը նախ գնահատեց եւ չնորհաւորեց Տէր Զօրի նորակազմ թաղական խորհուրդն ու ծնողները եւ թելադրեց, որ անոնք կառչած մնան հայ ժողովուրդի բարոյական արժէքներուն, տէր կանգնին եկեղեցոյ ու ազգին, յիշեցնելով, որ մեծ է իրենց վստահւած նույիրական գործը, որովհետեւ աշխարհի չորս ծագերէն բազմագույն հայեր կ'այցելեն Ա. Նահատակաց եկեղեցի եւ կ'արժանանան ջերմ ընդունելութեան:

«Հայ Սկաուտի Օր»ուան տօնակատարութիւնը բոլորին համար ցնութեան օր մը եղաւ, հայրենասիրութեան ոգին աւելի եւս ամրացաւ սկաուտներուն մէջ, զգալի աշխուժութիւն բերելով շրջանին, յայտնեց եղբ. Քէօշկէրեան: Իր խօս-



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիո Շրջանային Վարչութեան և Շրջանային Սկաուտ. որհուրդի Աերկայացուցիշները Տէր Զօրի քահանայ հօր, թաղականութեան Աերկայացուցիշներ և սկաուտական կորիզի պատասխանատուներուն հետ:

դակցաբար աշխատին ազգին վերելիքին համար: Ապա, Քահանայ Հայրը փոխանցեց իր բարեմաղթութիւնը եւ աղօթքը առ Աստուած՝ անսասան պահելու Տէր Զօրի սկաուտական կորիզը եւ հայութիւնը:

Հանդիսութիւնը վերջ գտաւ «Յառաջ նահատակ»ով:



*Made from one single slice
of natural Australian opal*

Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199

fax: +61 2 9262 1630

Website: www.classiquewatches.com

Email: Info@classiquewatches.com

քին աւարտին, եղբայրը բեմ հրավիրեց Սուրիո Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեանը, որպէսպի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանածաղիկով գնահատէ եղայրը Աբիկ Խաչոյեանը եւ Մանօ Սիւլահեանը՝ իրենց ժրաշան աշխատանքին համար:

Այս առթիւ սրտի խօսք ուղղեց Հայկազ Քհնյ. Մասոյեան, ըսելով, որ մեր զորութեան հիմնական պատճառը մէկ սիրտ եւ մէկ բռունցք ըլլալն է, հոն է մեր յաջողութեան գաղտնիքը՝ եկեղեցին եւ միութիւնը համագործակցաբար եւ խորհրդակիցին համար: Ապա, Քահանայ Հայրը փոխանցեց իր բարեմաղթութիւնը եւ աղօթքը առ Աստուած՝ անսասան պահելու Տէր Զօրի սկաուտական կորիզը եւ հայութիւնը:



Հ.Մ.Լ.Մ.-ՖՐԱՆՍԻ «ՍԿԱՌԻՏԻ ՕՐ»Ը

**Սեւան Նազարեան
ՓԱՐԻԶ**

Կիրակի, 26 Մարտին, Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի սկառատական կազմին նախաձեռնութեամբ եւ պատրաստութեամբ, Ռանսիի «Դպրոցական» վարժարանին մէջ տեղի ունեցաւ «Սկառատի Օր»ուան տօնակատարութիւն:

Ներկայ էին սկառատական կազմէն 65 սկառատներ, մասնաճիւղին Սկառատ. Խորհուրդը, վարչականներ եւ աւելի քան 200 ծնողներ, միասնաբար տօնախմբելու տարին անգամ մը տեղի ունեցող «Սկառատի Օր»ուան հանդիսութիւնը:

Ձեռնարկին յայտագիրը կը բաղկանար հիմնական երկու բաժինէ: Առաջին անգամ սկառատները ներկայացուցին սկառատական արարողութիւններ՝ տողանցք եւ աստիճաններու բաշխում: Սկառատական շեփորախումբը իր կարգին խանդավառեց ձեռնարկը՝ նուագելով քայլերգներ եւ ազգային երգեր: Գեղարուեստական բաժինը կ'ընդգրկէր հայկա-

կան թէ միջազգային երաժշտութեան նույրուած կտորներու ներկայացում: Անջատաբար, արծուիկներն ու գայլիկները, արենոյններն ու սկառատները ելոյթ ունեցան երգերով, արտասանութեամբ, պարով եւ թատերական ներկայացումով:

Վարչութեան անունով խօսք արտասանեց Հ.Մ.Լ.Մ.-Ֆրանսի փոխ-ատենապետ եղբ. Վարանդ Պաղտասարեան: Եղբայրը հիմնականին մէջ շեշտեց հայ սկառատին տարրերութիւնը այլ ժողովուրդներու սկառատներէն, տրուած ըլլալով որ անոր արաջնահերթութիւնը այլ բան է՝ պահպանել լեզուն եւ մշակոյթը: Հայապահպանումը անմիջական մտահոգութիւն է հայ սկառատին համար եւ Հ.Մ.Լ.Մ.ը մէծ դեր ունի այս իմաստով՝ սկառատական թէ մարզական իր ճիւղերով: Ապա, եղբ. Պաղտասարեան անդրադարձաւ Համա-Հ.Մ.Լ.Մ.ական 8րդ բանակումին կարեւորութեան: Բանակումը տեղի պիտի ունենայ Հայաստանի մէջ: Եղբայրը նշեց, թէ իւրաքանչիւր սկառատի համար անհրաժեշտ է մասնակցիլ նմանօրինակ բանակումի մը, որովհետեւ ան առիթը կ'ընծայէ ծանօթանալու տարբեր ցամաքամասերէ եկած հայ սկառատներու:

Ծար.ը՝ էջ 40



Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

**EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION
AND TOTAL CONTROL APPLICATION**

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria
Tel: (03)4916017 Fax:(03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

Philippe Photo Trade

Assadourian Bros.

Եղբ. Կարպիս Էօլսւչքեանի ՅիշԱՏԱԿԻՆ

**Սգակիր մը
ՀՈՍ ԱՆՁԵԼԸ**

Ինը ամիսը ժամանակի իմաստով երկար տեսողութիւն չէ, սակայն անվերադարձ բաժանումի պարագային իսկապէս ծանր է ու երկար: Դիւրին չէ ինը ամսուան մէջ հաշտուիլ կորուստին հետ մարդու մը, որ աւելի քան 50 տարի գործոն մասնակցութիւն ունեցած է միութեան աշխատանքներուն, հոգւով, սրտով, նիւթապէս, բարոյապէս եւ զաւակներով:

Ինը ամիսէ չկայ եղբ. Կարպիս էօլմէսէքեանը, երբեմնի ֆութպոլիսար, վարչականը, մասնաճիւղի հիմնադիրն ու «Ժիպար Հ.Մ.Լ.Մ.ական»ը, որուն կորուստը մէծ եղաւ Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանին համար:

Եղբ. Կարպիս էօլմէսէքեան ծնած էր 1929ին, Պէյրութ, աղգասէր եւ համեստ ընտանեկան յարկի մը տակ: Մէկ տարեկանին կը կորսնցնէ հայրը եւ կը ճաշակէ որբութեան դառնութիւնները: Ան կեանքի դժուարութիւնները յաղթահարելու կամքը կը ժառանգէ մօրմէն, որ փոքր տարիքէն զայն կը յանձնէ Հ.Մ.Լ.Մ.ի հոգածութեան:



2001. Եղբ. Կարպիս Համա-Հ.Մ.Լ.Մ.-ական նրդ մարզամաղերուն Պէյրութ, Վեթերան ֆութպոլիսատներու տարազով նկարուած՝ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան օրուան ատենապետ եղբ. Բիրզանդ Թորիկեանի հետ:

Զուիցերիա, նոյն ընկերութեան ընդհանուր պատասխանատուի վստահելով իրեն: Նոյն շրջանին, ան ֆրանսերէնի թարգմանիչը կ'ըլլայ Քաթարի իշխանուհին:

1962ին, վերջնականապէս Լիբանան վերադառնալով, եղբ. Կարպիս ժամացոյցի իր անձնական աշխատանոց-վաճառատունը կը բանայ, միաժամանակ շարունակելով մարզական իր գործունէութիւնը Հ.Մ.Լ.Մ.ի շարքերէն ներս:

1964ին, կը ժանօթանայ եւ ընտանեկան բոյն կը կազմէ Զարուհի Կարպուշեանի հետ, որ իրեւ արենոյշ պատասխանատու Հալիպէն Պէյրութ ժամանած էր, Հ.Մ.Լ.Մ.ի համագումարի մը մասնակցելու համար: Էօլմէսէքեան գոյգը կը բախտաւորուի չորս զաւակներով՝ Մարալ, Ալօ, Շահէ եւ Վահէ, որոնք իրենց ծնողներուն նման Հ.Մ.Լ.Մ.ականի ազգային գիտակցութեամբ կը մեծանան եւ մինչեւ օրս կը շարունակեն իրենց միութեանական պարտականութիւնները, պատասխանատու զանազան պաշտօններ ստանձնելով միութենէն ներս:

Փոքր տարիքէն, եղբ. Կարպիս կ'ըլլայ ֆութպոլիս սիրահար մը եւ մարզական իր նախաքայլերը կ'առնէ ֆութպոլիթա-



1999. Եղբ. Կարպիս (աջէն առաջինը) Հ.Մ.Լ.Մ.ի 7րդ Պատգամաւորական ժողովին, Ատմա, Լիբանան:

զային խումբերու մէջ: Աքօ Աշճեա-
նի, Գրիգոր Գալայնեանի («Սիկար
Գօղօ») եւ Փութպոլասէր այլ ընկեր-
ներու հետ կը հիմնէ Պէյրութի
Հ.Յ.Դ. «Բաբոչն Սիւնի» Պատանե-
կան Սիութեան Փութպոլի խումբը:
Դպրոցական տարիներուն ան մաս
կը կազմէ Ճեմալանի Փութպոլի
խումբին եւ իր լաւ խաղարկութեամբ
կը շահի մեծ ժողովրդականութիւն:
1946ին, ծանօթ Հ.Մ.Լ.Մ.ական եղբ.
Յովկաննէս Տէր Յարութիւնեանի
քաջալերանքով ան կ'անդամակցի
Հ.Մ.Լ.Մ.փ Պոլը Համուտի մասնա-
ճիւղին, իրենեւ Փութպոլի մարզիկ:
Նոյն տարին, մասնաճիւղի Փութպո-
լի երկրորդական խումբին հետ
կը մասնակցի Հալէպի միջ-մասնա-
ճիւղային մրցումներուն:



Մեծի Տաճա Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին Աշահամբոյրի պահուն, 1999,
Հ.Մ.Լ.Մ.ի 7րդ Պատգամատրական Ժողովին:

մուտքի մասնաճիւղի ֆութպոլի Ա-
խումբի փայլուն յետապահներէն եւ
իր կարեւոր բաժինը կը բերէ խումբին
յաղթանակներուն, յատկապէս 1947ին՝
Լեռնալիքանանի ֆութպոլի ախոյեա-
նութեան նուածման մէջ: Շրջան մը
եղը. Կարպիս կը ստանձնէ Պուրճ Հա-
մուտքի ֆութպոլի Բ. խումբի մարզիչի
պատասխանատուութիւնը:

Առաջին անգամ ան վարչական
կը լուսում էր 1955ին, սակայն, հակառակ
քարտուղարի իր պատասխանատուու-
թեան, կը շարունակէ մարզիկի եւ մար-
զիչի իր պատասխանատուութիւնները:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին սկիզբը, 1976ին, եղր. Կարպիս կը փոխադրուի Գանատա, ուր կարճ ատեն մը մնալէ ետք, աշխատանքի բերումով կ'անցնի Մ. Նահանգներ եւ կը հաստատուի Սան Ֆրանսիսկօ: 1977ին կը միանայ Հ.Մ.Լ.Մ.-ի տեղույն մասնաճիւղին եւ կը ստանձնէ պատօններ: Երկար տարիներ կ'ըլլայ վարել ասաւ՝ առենիսական:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU




PARIS

*Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.*

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



1989ին, եղբ. Կարպիս վերջնականապէս կը հաստատուի կլէնտէց եւ իրեն ծանօթ աշխատասիրութեամբ ու հետեւողականութեամբ բարեկեցիկ կեանք մը կ'ապահովէ ընտանիքին, միութենական իր գործունէութիւնը շարունակելով յատկապէս Հ.Մ.Լ.Մ.էն ներս։ Եղբայրը նկատելով օր ըստ օրէ Գրեսէնթա հովիտի մէջ բազմացող հայութիւնը, քանի մը եղբայրներով, Շրջանային Վարչութեան հետ համախորհուրդ, 1993ին կը հիմնէ Հ.Մ.Լ.Մ.ի «Շանթ» մասնաճիւղը, դառնալով անոր առաջին ատենապետը։

Իբրև Փութպոլի նախկին մարզիկ, ան նախաձեռնողներէն մէկը կ'ըլլայ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Փութպոլի վեթերաններու խումբին եւ միշտ դուռը բաց կը մնայ բոլոր տեսակի օգտակար աշխատանքներու։

Հ.Մ.Լ.Մ.ին իր անսակարկ նուիրաբերումին համար, եղբ. Կարպիս բազմից կ'արժանանայ յուշանուէրներու։ 1998ին, միութեան 80ամեակին առիթով, ան կը պարզեւատրուի «Շառայութեան» շքանշանով, իսկ տարի մը ետք՝ Շրջանային Վարչութիւնը բարձր գնահատելով եղօր Հ.Մ.Լ.Մ.ականի գործունէութիւնը, անոր կը չնորհէ «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական»ի տիտղոսը։ Նոյն տարին, ան Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ կը հրաւիրուի միութեան 7րդ Պատգամաւորական ժողովին, Ատմա, Լիբանան։

Եղբ. Կարպիսին համար միութենական ըլլալը համեստութիւն, նուիրում եւ աշխատասիրութիւն էր։ Այս սկզբունքով

ալ պաշտօնները երբեք չշլացուցին զինք։ Ան միշտ օգնութեան ձեռք երկարեց ուր որ հարկ զգաց։ Ան հաւատարիմ զօրակցողներէն մէկն էր «Մարգիկ» ամսաթերթին, որուն իր նիւթական եւ բարոյական զօրակցութիւնը երբեք չզլացաւ։

Եղբ. Կարպիս կը հաւատար, որ «Հ.Մ.Լ.Մ.ի ստեղծումը ինքնին ազգային մեծ գործունեութիւն է։ Հ.Մ.Լ.Մ.ը երիտասարդութիւնը հայ պահող ամենեն ուժեղ կազմակերպութիւնն է, տունեն, դպրոցնեն եւ ուրիշ որեւէ բանն աւելի»։

Ան խորապէս կը հաւատար Հ.Մ.Լ.Մ.ի առաքելութեան, իսկ անոր անդամակցութիւնը կը նկատէր «ազգային պարտականութիւն»։

Հողը թեթեւ գայ վրադ, եղբ. Կարպիս։ Սերունդները երախտապարտութեամբ պիտի յիշեն քեզ։

ԱՍՏԱՆՔ

ՅՈՒԾԱՄԱՏԵԱՆ
ԱՐԱՐԱՏ ՔՐԻՍԵԱՆ
ՄԱՀՈՒԱՆ 40ԱՄԵԱԿ

Պատրաստեց՝ տոռք. Շաւարշ Ա. Քրիսեան,
Լու Անձելը, 2005:

FREDDY KARAGEUZIAN

"ONNIG OF CAIRO"

Egyptian Museum

Tahrir Square - Cairo

FREDDY KARAGEUZIAN

Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: freddy@gega.net

SԱՅԿԱՊԱԿԱՎԱՆԻԿԱՅ



ՄԱՏԱՆԻՆ

Այս հերիաթին առաջին մասով տեսանք, թէ ինչպէ՞ս պառաւ մը կար, որ ուներ մեկ հատիկ զաւակ:

Պառաւին տղան, հերիաթին առաջին մասին մէջ, անտառի տղոց ձեռքէն ազատեց կատու մը, շուն մը եւ օճ մը: Եւ երբ տղան ու երեք բարեկամները նստած էին աղբիւրի մը շուրջ, հաց ուտելու, հերիաթը ընդհատուեցաւ հո՛ն, ուր օճը յանկարծ... տղու վերածուեցաւ:

Հերիաթը կը շարունակուի:

Սալբի Լատոյեան ՊԵՅՐՈՒԻԹ

Sուր վերածուած օճը պառաւին տղուն եւ երեք բարեկամներուն կը պատմէ իր պատմութիւնը, թէ ինք թագաւորի տղայ է, բայց կախարդները զայն վերածած են օճի:
Տղան կ'երթայ եւ թագաւորին կը պատմէ պատահածը:

Թագաւորը երկու պալատականներ կը դրկէ, որպէսզի պառաւը եւ տղան բերեն իր քով:

Պալատականները տղուն կ'ըսեն, թէ թագաւորը պատրաստ է ուզածդ նուիրելու: Անոնք կ'ըսեն նաեւ, որ թագաւորը ունի ակով մատանի մը, որ կախարդական յատկութիւններ ունի. երբ վրայի ակը չփես եւ իննդրանք մը ուզեն՝ կը կատարուի: Կրնաս այդ մատանին խնդրել, կ'աւելցնեն անոնք:

Տղան կը հասնի թագաւորին պալատը: Թագաւորը շատ լաւ կ'ընդունի զայն եւ մայրը ու կ'ըսէ:-

- Տղա՛ս, ի՞նչ որ կ'ուզես պատրաստ եմ քեզի նուիրելու:

լու:

Տղան կ'ըսէ.

- Ակով մատանիդ կ'ուզեմ:

Թագաւորը երկար մտածելէ ետք կը պատրաստանէ.

- Լա՛ւ, քանի

խոստացայ ուզածդ նուիրել եւ դուն տղուս կեանքը ազատեցիր, քեզի կու տամ ակով մատանիս:

Պառաւը եւ տղան ուրախ կը վերադառնան իրենց տունը: Ճամբան, պառաւը տղուն կ'ըսէ.

- Տղաս, ինչո՞ւ թագաւորին աղջկան ձեռքը չենք խնդրեր:

Տղան համաձայն կը գտնուի պառաւին առաջարկին եւ պառաւը կ'երթայ թագաւորէն կը խնդրէ աղջկան ձեռքը:

Թագաւորը կը ներկայացնէ շատ մը պահանջներ, ինչպէս՝ սպիտակ ձիեր, պալատ, պահակներ, ծառաներ եւ այլն: Եւ կ'ըսէ, երբ բոլոր ուզածներս իրականացնես, այն ատեն աղջիկս քեզի հարս կու տամ:

Պառաւը յուսահատ կ'երթայ տուն եւ տղուն կը պատմէ թագաւորին պահանջները: Տղան կը յիշէ, թէ ունի կախարդական մատանի մը: Մատանին կը դնէ մատը, կը չփէ ակը եւ կը խնդրէ թագաւորին պահանջները. քանի մը վայրկեան վերջ ան ինքինք կը գտնէ գեղեցիկ պալատի մը մէջ, պահակներով եւ ծառաներով շրջապատուած: Կը նստի ճերմակ ձին, կ'երթայ թագաւորին քով եւ կը խնդրէ աղջկան ձեռքը, թագաւորը զարմացած, բայց ուրախութեամբ իր աղջիկը հարս կու տայ մեր սիրելի հերոսին:

Այսպէս, սիրելի ընթերցողներ, կարելի է օրինակ առնել մեր հերոսին: Ան որ բարիք կը գործէ եւ օգտակար կը դառնայ ուրիշին, անպայման որ կը վարձատրըւի:



Ի՞նչ կը ՓԱՓԱՔԻՄ ՈՒՍՏԱՀԱՅ ԱՊԱԳԱՑԻՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ



Հնագիտութեալ կը պրատէ հին քաղաքակրթութիւններու հետքերը, կը վերլուծէ զանոնք, տեղեկութիւններ կը հաւաքէ եւ մեր ընկերութեան կը բացատրէ անցեալի քաղաքացիներուն ապրած կեանքը, պայմանները եւ սովորութիւնները:

Հնագիտութեալ կը բանաձեւէ կարծիքներ եւ զանոնք կը ստուգէ գետնի վրայ: Ան կը ճշդէ հնութիւններու թուականները եւ անոնց ո՞ր ժողովուրդին կամ քաղաքակրթութեան պատկանիլլ:

Հնագիտութեալ իր գտած հնութիւնները ուսումնասիրելի ետք՝ զանոնք կը զետեղէ պետական թանգարանի մէջ:

ԳԻՏԱԿԱՆ



ԻՆՉՊԵՍ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ ԱՊԱԿԻՆ

Ապակին կը գործածուի շինելու համար տեսակաւոր իրեր, ինչպէս՝ ամաններ, գաւաթներ, հայելիններ, ծաղկամաններ եւ այլն:

Տարածուած կարծիքի մը համաձայն, ապակին գտած են փիւնիկեցիները:

Ապակին կը պատրաստուի ճերմակ աւագի, կալաքարի (սոսիխոմ), կիրի եւ ապակիի փշրանքներով: Այս բոլոր նիւթերը իրարու խառնելի ետք, վարպետներ զանոնք կը դնեն յասուկ փուռի մը մէջ, կը հալեցնեն, մինչեւ որ անոնք վերածուին թափանցիկ հեղուկի: Ապակին հեղուկը

կը լեցնեն կաղապարներու մէջ, կը պաղեցնեն եւ այսպէսով կը ստանանք ապակին:

Ապակին կարելի է կարել տարբեր չափերով եւ կամ տաք վիճակի լեցնել կաղապարներու մէջ, ստանալու համար զանազան ձեւեր եւ տեսակներ:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
Տունը փոքրիկ, մուտքը
մեծ,
Միայն ինքն է տանը մէջ:

(Պատասխանը՝ յաջորդիւ:
Նախորդ, թիւ 278ի հանելուկին
պատասխանն էր անունի)



S ս պ թ ե ր Հ ա յ ե ա ց ք ո վ



Էլի Հովհաննիս

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

«Մարզիկ»ին հետեւեալ նուիրատուութիւնները կատարւած են Գանատայէն:

- Եղբ. Կարօ Թիւթիւնճեանի մահուան առիթով՝
 - Եղբ. Հրաչ Տէր Մարգիսեան 50 դանատական տոլար
 - Եղբ. Սեղրակ Պուրապեան 50 դանատական տոլար
 - Եղբ. Լեւոն Նամարեան 50 դանատական տոլար
 - Եղբ. Բարեգէն Կարապետեան 50 դանատական տոլար
 - Եղբ. Արմէն Կէտիկեան 50 դանատական տոլար
 - Եղբ. Վահան Զալբրեան 50 դանատական տոլար
 - Եղբ. Տիրան Շահինեան 50 դանատական տոլար
 - Եղբ. Գրիգոր Ապրափեան 50 դանատական տոլար
 - Եղբ. Բիւզանդ Լախոյեան 30 դանատական տոլար
 - Եղբ. Յարութիւն Պէրպէրեան 20 դանատական տոլար
 - Եղբ. Յարութիւն Գեղարդի մահուան առիթով՝
 - Եղբ. Վարուժան Սերոբեան \$50

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ....

Նարունակուած՝ 34րդ էջէն

Եղբ. Վարանդ Պաղտասարեան անդրագարձաւ նաեւ վարչութեան տարած աշխատանքին՝ մեծ գոհողութիւններու գնով, ու խնդրեց ծնողներէն իրենց աջակցութիւնը եւս, որպէսզի նոյն ոգիով եւ միասնաբար յառաջ տարուի գործը:

Զեռնարկին պաշտօնական բաժինէն եաք, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի սկառատներուն կիրակնօրեայ գործունչութեան վայրին մէջ, ծնողները հաճելի մժնոլորտի մէջ, հրարապիրութեան մը առընթեր, ունեցան մտերմիկ զրոյց ու գոհ սրտով վերագրածան իրենց տուները:

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, երկու տարիի ի վեր հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւնը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամներ են.՝

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԵՆ Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուհի Փալեաններ, Պետօ եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Զարեհ Գարակիլէեան, Յակոբ Թոքարլեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպի Պարտումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Կարապետ Ն. Թովմէեան:

ՅՈՐԴԱՆԱՆԵՆ Ճորժ Տաքէսեան:

ԽԱՂԲԱՆ ԹԻՒ 155

ԺԱՄԱՆՅՑ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

- Վազգէն Շուշանեանի երկերէն (երկու բառ):
 - Ասիական երկիր - Մենք՝ ըստ օտարներու - Պատղատեսակ:
 - Պատի վրայ նկարչութիւն - Հարիւրամեակ - Կոնսաբեր ծառ:
 - Լատին աւագերէց:
 - Անձնական դերանուն - Հին պատերազմական նաւ:
 - 6---
 - ՈՒԷալ Մատրիտի պրազիլցի ոմբարկուին անունը:
 - Հայ գուսան - Ա՛ռ, կառչիր:
 - Ժամանակի միաւոր - Զայնակից գիրեր:
 - Մեղմ հով - Թուրթակի մեծ տեսակ:
 - Եւրոպական մայրաքաղաք - Կոճիկ - Լեցուն:
 - Մանգաղի կոթ - Սպիտակ փայտով բարձր ծառ:
 - Սմսերուկ - Որոշուած գին - Տառի մը անունը:
 - Յովհաննէս Շիրազի երկերէն - Թաքուն պայթուցիկ:
 - Բուն, հարազատ - Բունատեղ:
 - Սակաւ - Ալեքս Ֆերկընի տրուած պատուանուն:
 - Ալբուբեննէն - Թէնիխմէն՝ Ուաֆայէլ - Նմանաձայն գիրեր:
 - Սիրունիկ - Տառի մը անունը - Մեղեխ:
 - Երնէկ'կ - Գոյականի տեսակը բնորոշող:
 - Փոխինդ - Լաւ, պատուական - Այրող:



ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Իտալիոյ Փութպոլի ազգային խումբին նախկին 20
մարզիչը - Ապականութիւն:

2. Փութիւն - Տեղական մակըայ - Հայ ազատագրական պայքարի ռահվիրան:

3. Բազմութիւն - Վաճառանիլիթ - Ջրային փոխադրամիջոց:

4. Սպասէ' - Որ - Գոյութիւն ունին - Մանրութեան միաւոր:

5. Նշանարը ետեւէն ծակծկելու փայտէ գործիք - Ֆրանսացի թենիսվումըն:

6. Ողբ - Ռուսական նախկին անջրապետակայան - Պարտիզանի գործիք:

7. Տաղաւար - Նշանաւոր համբերատարը - Արաբական երկիր - Լանջ:

8. Բերդ - Գիրի մը դրացիները - Կանացի պատուանուն - Այրուբենէն:

9. Տառի մը անունը - Պտղատու ծառատեսակ - Սարսափ - Անձեղ, շաղակրատ թուչուն:

10. Վիշակ - Այրուբենէն - Հայաստանի գետերէն - Ներքեւ:

11. Գեղատեսիկ տերեւներով բոյս - Հարեւան - Կենդանիի դիակ:


12. Հռոմը այրել տուող կայսը - Յունաստանի Փութպոլի ազգային խումբին գերմանացի մարզիչը - Արական օտար անուն:

13. Լծորդութիւն - Յուցական ածական - Կութ - Օդանման գոյացութիւն:

14. Վէճ - «Նահապետ» գրչանունին տէրը - Արական օտար անուն:

15. Զիւթ - Արական օտար անուն - Եւեկուուն, անքթիթ:

ԹԻՒ 154 ԽԱՂԲԱՌԻՆ
ԼՈՒՅՈՒՄՐ



Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆ

**Յառաջ Յառաջ Յառաջապահ
Յառաջ Յանդեմանկան Յաղթաբակ:**

**Յառաջ Յառաջ Յառաջապահ
Յառաջ Յանդեմանկան Յաղթաբակ:**

